

Մ Ա Ր Ջ Ի Կ

ԲՍԸՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

Ի.Վ. ՏԱՐԻ, 2005, ԹԻԻ 12 (282) VOL. XXIV N°12

السنة الرابعة والعشرون العدد الثاني عشر

ՎԹԸՄՄԿ "ՕԱՋԺԿԼԲ





Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ա Ր Կ Ի Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ա Մ Ե Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ե Ն Տ Ր Ո Ն

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Անվերջ վապք մրն է կեանքը: Կը յաջողի ան, որ կրնայ դիմագրաւել արգելքներ: Կը յաղթանակէ ան, որ ունի անխախտ հաւատք եւ յարատեւելու կամք:

Անհատական կեանքի յաղթանակէն ու յաջողութենէն աւելի, սակայն, հիմնական նշանակութիւն ունին հաւաքական մեր կեանքին յաղթանակն ու յաջողութիւնը, որոնք մեծապէս կախեալ են մեր ապագան երաշխաւորող երիտասարդութենէն:

Այս պարագային, երիտասարդութեան մէջ գտնուող ուժն ու կենսունակութիւնը, միտքն ու ուսումը, պարգացումն ու կարողութիւնները բաւարար երաշխիքներ չեն յաղթանակի՝ անհատական թէ հաւաքական մեր կեանքին մէջ: Խելք եւ տրամաբանութիւն, վկայական եւ կարողութիւն առանձինն բաւարար արժէքներ չեն՝ կարենալ դիմագրաւելու համար մեզի սպառնացող դժուարութիւններն ու տագնապները:

Վերջին հաշուով ո՞ւժն է կարելորդ կեանքի մէջ, թէ ուժերու կազմակերպումը՝ իտէլի մը շուրջ: Ի՞նչ կ'արժեն ուժեր, մտաւորական ու նիւթական կարողութիւններ, եթէ անոնք չհամախմբուին ընդհանրական նպատակի մը շուրջ եւ չժառայեն որոշ գաղափարի:

Իտէլիի եւ գաղափարի ծառայութեամբ մերօրեայ երիտասարդութենէն անկարելի զոհողութիւններ չեն սպասուիր, այլ նուազագոյնը՝ մասնակցութիւն հաւաքական մեր կեանքին: Ազգին ու հայրենիքին օգտակար դառնալու միջոցներ շատ կան: Կարելորդ ներդրում ունենալն է ազգային ինքնաճանաչումի, ազգակերտումի եւ ազգապահպանումի մեր աշխատանքներուն:

Չի բաւեր կրաւորական հանդիսա-

տեսի աչքով հետեւիլ ազգային-միութենական մեր կեանքին, կամ պարպապէս անոր թերութիւնները մատնանրջելով՝ չքմեղանքներ գտնել անկէ հեռու մնալու համար: Անշուշտ, անթերի չէ ազգային-միութենական մեր կեանքը. բազմաթիւ թերութիւններէ կը տառապի ան, բայց ո՞վ պիտի սրբագրէ պանոնք, եթէ ոչ՝ անոնց քննադատութեան եւ սրբագրութեան յանդգնութիւնը ունեցող մերօրեայ երիտասարդութիւնը:

Ձեռնթափութիւնը արտօնելի չէ: Կը բաւէ որքան ենթակայ ենք համաշխարհայնացումի, այլասերումի եւ խելայել նիւթապաշտութեան արտաքին հոսանքներուն: Մեր շուրջը, մարդիկ արժանապատիւ կեանքի մը ապահովման պայքարը կը մղեն, իսկ մենք այդ պայքարին հետ միասին ու անկէ առաջ, մեր ներսը՝ ազգային գոյատեւման դաժան կռիւ կը մղենք:

Ազգին Բերդը հարկ է նախ ներսէ՛ն ամուր պահել. «Պարտութիւնը ի՞նչ է որ դուրսը, կռուի դաշտին վրայ, պալատին մէջ, կամ ուր որ կ'ուզես: Պարտութիւնը իսկապէս լեղի է հոգիին մէջ, եւ ով որ հոգիին մէջ պարտուած է անոր փրկութիւն չկայ: Մարդիկ նաեւ հոգիին մէջ կը յաղթուին: Հոգիին մէջ չյաղթուածը անպարտելի է», պիտի ըսէր Լեւոն Շանթ:

Հայ կեանքի դժուարին օրերուն, ասպարէզը միշտ երիտասարդներուն եղած է: Այսօր, զգալիօրէն աննպաստ պայմաններու մէջ, ձեռնոցը դարձեալ նետուած է երիտասարդութեան, որպէսզի դուրս գայ իր կաշիէն, իր անձնական հետաքրքրութիւններու նեղ շրջանակէն եւ իր ուժերու կենսունակութեամբ նոր հորիզոններ բանայ ազգային-միութենական մեր կեանքին, ի խնդիր հաւաքական մեր ուժին ամրապնդման եւ ընդհանրական մեր նպատակներուն իրականացման:



ԹԻՒԻՆ ՆԻՒՆԵՐՂ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله ریاضیه شهریه تصدیرها جمعیه الهوستمن الریاضی



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ
 ԻԳ. ՏԱՐԻ, 2005, ԹԻՒ 12 (282)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
 Սեդա Պէշեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Աբօ Մոսիկեան
 Իշխան Եղիայեան
 Գօգօ Մկրտչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Պետրոս Շենմեսեան, Սամուէլ
 Մկրտչեան, Չաւէն Բրուտեան
 և շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Զարեհ Չէօրէքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmencentral.com
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 լ.ն.:
 Տարեկան բաժանորդագրութեան
 սակ ճշդուած է 35000 լ.ն.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
 և Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 և Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա և Աւստրալիա՝ \$55):



3

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Կեդրոնի Բացում 3
- «Մարզիկ»ի 25 Ամեակ 5
- Դաստիարակչական 21
- Մեր Տեսակցութիւնները 22
- Մասնաճիւղի Մասնաճիւղ 26
- Մեր Կորուստները 39



22



5

ԳԻՐ ԵՒ ԽՕՍՔ

- Շնորհաւորագիրներ 8
- Խօսքեր 10
- Արձագանգ 15
- Ցաւակցագիրներ 17
- Պատգամ 18
- Վկայութիւն 24

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԲԱՐԵՉԱՐԴՈՒԱԾ ԿԵԴՐՈՆԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Շէնքերը միջոց են ծառայելու այն նպատակին, որուն համար կեանքի կոչուած են անոնք: Շէնքերը ինքնանպատակ չեն: Սակայն, լաւ աշխատանքի համար անհրաժեշտ են համապատասխան պայմաններ:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան Պուրճ Համուրի կեդրոնը, գնուած ու կահաւորուած 1986ին, 20 փարի երբ այլեւ չէր բաւարարէր օրուան պահանջները: Կեդրոնին փարբեր բաժինները՝ Կեդրոնական Վարչութեան ժողովարեղին եւ գործափարութեան գրասենեակը, «Մարզիկ»-ի խմբագրարունը եւ Հ.Մ.Ը.Մ.Ի բանգարունը կը կարօրէին հիմնական վերանորոգութեան եւ բարեկարգման, ինչ որ իրականացաւ անցնող ամիսներուն:



Վերանորոգուած ու բարեկարգուած կեդրոնին բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 17 Մարտ 2006ի երեկոյեան ժամը 8ին, ներկայութեամբ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանի, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մսրրեանի, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Մխիթարեանի, Հ.Մ.Ը.Մ.Ի

Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներու, նախկին երեսփոխաններ՝ Ժազ Չուխատարեանի եւ Նուրիճան Տէմիրճեանի, պատկան մարմիններու ներկայացուցիչներու եւ բարերարներու:

Բացման ժապաւէնը հատեցին Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդը,

Պուրճ Համուտի քաղաքապետը եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը: Ապա, միութեան թանգարանին մէջ հաւաքուած ներկաներուն բարի գալուստի խօսք ուղղեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Եղբայրը յայտնեց, որ Լիբանանի տնտեսական տագնապի այս օրերուն, կեդրոնի մը բարեկարգման մասին



մտածելն իսկ քաջութիւն կ'ենթադրէ: Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը հաւատքով ձեռնարկեց այս գործին եւ քաջութիւնը ունեցաւ յաղթահարելու իր դէմ ցցուած դժուարութիւնները: Եղբ. Մկրտիչեան նշեց, թէ միութեան համագաղղութեային կառուցին ստեղծման առաջին օրէն իսկ Կեդրոնական Վարչութիւններու համար մտահոգութիւն եղած է մնայուն կեդրոն մը ունենալու պարագան: Եղբայրը ընդհանուր գիծերով ներկայացուց 1974-1985 այս ուղղութեամբ տարուած աշխատանքները, որոնց իբրեւ արդիւնք՝ 1985ին իրականացած է ծրագիրը եւ 31 Յունուար 1987էն սկսեալ Հ.Մ.Ը.Մ-ը ունեցած է կեդրոն մը, որուն գլխաւոր սրահը թանգարանի վերածուելով կոչուած է եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանի անունով՝ ի յիշատակ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նահատակ ատենապետին: Շարունակելով իր խօսքը, եղբ. Մկրտիչեան յայտնեց, թէ տարի-

ներու ընթացքին կեդրոնը հինգած էր եւ բարեկարգման կը կարօտէր: Ներկայ Կեդրոնական Վարչութիւնը իրագործեց այդ աշխատանքը՝ շնորհիւ Պուրճ Համուտի քաղաքապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ական կարգ մը եղբայրներու ազնիւ աջակցութեան:

Այս առիթով, եղբ. ատենապետը անդրադարձաւ նաեւ «Մարգիկ» ամսաթերթի 25ամեակին եւ նշեց, որ «Մարգիկ» կը մնայ Հ.Մ.Ը.Մ-ի շունչն ու ոգին փոխանցող հրատարակութիւնը:

Եզրափակելով իր խօսքը, եղբայրը շնորհակալական խօսքեր ուղղեց ներկաներուն, բարերարներուն եւ բոլոր նուիրատուներուն (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 10):

Իր կարգին, Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան շնորհակարարեց Կեդրոնական Վարչութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը՝ վերանորոգուած կեդրոնին բացման համար: Ան յայտնեց, թէ Հ.Մ.Ը.Մ-ը

միշտ ունեցած է մեր ժողովուրդին բարոյական աջակցութիւնը, բայց նիւթական աջակցութիւնը եւս կարելոր դեր ունի: Առաջնորդը նշեց, որ վերանորոգուած ու բարեկարգուած կեդրոնը կը խորհրդանշէ այն աշխատանքները, զորս Հ.Մ.Ը.Մ-ականները կը կատարեն, որպէսզի այս միութիւնը իր առաքելութիւնը յառաջ տանի մեր ժողովուրդի նոր սերունդին մօտ: Ան բարձր գնահատեց բոլոր բարերարներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ականներուն աշխատանքը՝ Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնին բարեկարգման ի խնդիր:

Խօսքերէն ետք, ներկաները շրջեցան կեդրոնին զանազան բաժինները: Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Վերանորոգման եւ բարեկարգման աշխատանքներէն գոհունակ, ներկաները «Մարգիկ»ի 25ամեակի ֆոնտին կատարեցին նուիրատուութիւններ, որոնց ընդհանուր գումարը հասաւ 12 հազար տոլարի (նուիրատուներուն ցանկը տեսնել առանձին):

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

«ՄԱՐԶԻԿ» Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 25 ԱՄԵԱԿԻ ՄԵԾԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՉ

- ԵՂԲ. ՎԱՀԷ ԶՈՔԿԱՐԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐԺԱՆԵԱՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

Բառորդ դարու պատմութիւն մը 280 թիւերու մէջ խտացուցած, Հ.Մ.Ը.Մ.ական խօսքի ու մտքի բեմը հանդիսացած «Մարգիկ» ամսաթերթը, Մարտին, Պէյրուսէն սկսաւ իր 25ամեակի տօնակատարութիւններուն, որոնք յառաջիկայ ամիսներուն պիտի շարունակուին տարբեր շրջաններու մէջ, հոն ուր միութեան մասնաճիւղեր գոյութիւն ունին, հոն ուր «Մարգիկ» ընթերցող ու աշխատակից եղած է անցնող 25 տարիներուն:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեամբ, Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանի նախագահութեամբ եւ «Մարգիկ» ի 25ամեակի յանձնախումբին կազմակերպութեամբ, Կիրակի, 19 Մարտ 2006ի առաւօտեան ժամը 11ին, Պուրճ Համուտի «Յակոբ Տէր Մեղրոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ մեծաշուք հանդիսութիւն մը,

որուն ներկայ գրտնրեցան Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան, ՄԱՀԱՅՍԻ ատենապետ վեր. Սողոմոն Քիլաղպեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մսրըրեան, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ եւ նախկին Կեդրոնական Վարչութիւններու անդամներ, Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ, Լիբանանի Կեդրոնական Դրամատան փոխ կառավարիչ եղբ. Ալէն Պալեան, պատկան մարմիններու, միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ հիւրեր:



հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայ լուսթեամբ յարգելու յիշատակը վերջերս մահացած վաստակաւոր երկու Հ.Մ.Ը.Մ.ականներու՝ եղբայրներ Կարօ Թիւթիւնճեանի եւ Յարութիւն Գեղարզի:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անունով խօսք առաւ ատենապետ եղբ. Յակոբ Քէչիչեան: Եղբայրը անդրադարձաւ դժուարին պայմաններու մէջ «Մարգիկ» ի ծնունդին եւ, հակառակ զանազան դժուարութիւններու, քառորդ դարու իր գոյատեւման ու յարատեւ գարգացման: Եղբ. Քէչիչեան զնահատեց «Մարգիկ» ի դերակատարութիւնը, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ը արտացոլացընող հայելի, հեռաւոր շրջաններու միջեւ կապեր հաստատող, հայը հայ պահող հրատարակութիւն: Ան Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին անունով զնահատանքի խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք գաղափարը յղացան եւ իրականացուցին «Մարգիկ» ի ծնունդը, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնք յողովարարութեամբ իրենց քոյր Լուսին Գազէզեան, որ «Մարգիկ» ի 25ամեակի յանձնախումբին անունով բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ զանոնք



Հանդիսութեան սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կողմէ փայլեցին Լիբանանի եւ Հայաստանի քայլերգները: Ապա, բացման խօսքը արտասանեց քոյր Լուսին Գազէզեան, որ «Մարգիկ» ի 25ամեակի յանձնախումբին անունով բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ զանոնք

Ողջոյնի խօսքէն ետք, բեմադրուեցաւ «Մարգիկ» ի նուիրուած սկաուտա-



Յուշանուէրներ կը ստանան Յասմիկ Մուրատեան, Լուսին Տէմիրճեան, Արփի Թիթիւնճեան, Լորիկ Սապունճեան, Բիւզանդ Թորիկեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Վիգէն Աւագեան, Աբօ Մոսիկեան եւ Սեդա Պէշլեան:



Լուսանկարները՝ ՍԹՈՒՏԻՕ ԱՇՆԱԿԻ

կան կարճ թատրերգութիւն մը, որուն ընդմէջէն տարազաւոր սկաուտներ մարմնաւորեցին բանակումի մը առօրեան, ընթացիկ աշխատանքները եւ յայտագիրները: Սկաուտները ներկաներուն ներկայացուցին նաեւ «խարուկահանդէս մը», որուն ընթացքին ելոյթ ունեցան կանչերով, երգերով եւ արտասանութիւններով: Աւարտին, զանազան շրջաններու մէջ ապրող Հ.Մ.Ը.Մ.ականները «Մարգիկ»ի էջերով կարդացին իրենց բանակումին մասին եւ դիտեցին իրենց նկարները: Թատերական պատկերը պատրաստուած էր Մատլէն Վարդանեանի եւ բեմադրուած էր եղբ. Բաֆֆի Կէօփոլանեանի կողմէ:

Ապա, խօսք առաւ «Ազդակ» օրաթերթի տնօրէն Շահան Գանտաճարեան, որ լուսարձակի տակ առաւ «Մարգիկ»ի ներկայութիւնը հայ մամուլի անդաստանին մէջ՝ իբրեւ իւրայատուկ բովանդակութիւն եւ ուղղութիւն ունեցող թերթ: Ան հաստատեց, որ ճիշդ չեն այն ենթադրութիւնները, որոնց համաձայն՝ «Մարգիկ»ը մարզական լուրեր կը փոխանցէ սոսկ եւ հետու է մամուլի հեղու ու դժուարին աշխատանքի ընթացքէն: «Այս արագ մօտեցումը, բնականաբար, չի համապատասխաներ իրականութեան: «Մարգիկ»ը միայն մարզիկին կամ մարզաձեւերով զբաղողին թերթը չէ: Անուանումը որեւէ ձեւով չի սահմանափակեր ո՛չ խորքը, ո՛չ բովանդակութիւնը, ո՛չ արծարծած հար-

ցերուն հորիզոնը, ո՛չ ալ մանաւանդ՝ խմբագիրներուն տեսադաշտը: «Մարգիկ»ը հասարակական, միութեանական, գաղափարական ուղղութեամբ թերթ է ըստ էութեան, եւ ատով իսկ բոլոր նախադրեալներն ու պատճառները ունի հանդիսանալու հայ հանրային կարծիքի ձեւաւորման գործընթացներուն վրայ ազդեցութիւն ունենալու միջոց մը», հաստատեց Շահան Գանտաճարեան: Ան դիտել տուաւ, որ «Մարգիկ»ը իր գոյութեան տարիներուն կարողացած է ազգային շունչ ու ոգի փոխանցել, մարզական, սկաուտական, միութեանական եւ ազգային պարունակներու առաջադրման եզրերուն ոսկի միջինը գտնել եւ իր էջերուն մէջ արտացոլացնել Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը՝ իւրաքանչիւր մարզի տարով իր իրաւունքն ու տեղը:

Շահան Գանտաճարեան իր խօսքին մէջ յատկապէս կանգ առաւ «Մարգիկ»ի խմբագրականներուն վրայ, որոնք ազգային մեր կեանքի զանազան երեսներուն կ'անդրադառնան, հրապարակային քննադատութիւններ կը կատարեն եւ պատգամներ կը փոխանցեն: Ան յատուկ կերպով անդրադարձաւ «Աշխատանքի բաժանում» խորագիրը կրող «Մարգիկ»ի 272րդ թիւի խմբագրականին, որ կը խօսի ճիշդ անձը ճիշդ տեղը դնելու անհրաժեշտութեան մասին, նշելով թէ միշտ չէ որ այդ մէկը կը պատահի:

իր խօսքին աւարտին, Շահան Գանտահարեան դիտել տուաւ, որ 25ամեայ իր երթին ընթացքին, «Մարզիկ» զարգացում ապրած է, բարգաւաճած եւ քայլ պահած է օրուան պահանջներուն հետ՝ միշտ կառչած մնալով իր նպատակներուն (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 14):



Այնուհետեւ ցուցադրուեցաւ «Մարզիկ»ի պատմականը, աշխատանքի պայմաններն ու յաջողութիւնները ներկայացնող խտասալիկ մը, որուն մէջ «Մարզիկ»ի առնչուող որոշումներու, աշխատանքային զանազան հանգրուաններու, մարզերու եւ այժմու կացութեան մասին վկայութիւններ կու տային եղբայրներ Բիւզանդ Թորիկեան, Յարութիւն Գեղարդ, Միհրան Շիմշիրեան, Պատրիկ Կիւլպէնկեան եւ Վիգէն Աւագեան:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անունով խօսք առաւ «Մարզիկ»ի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան, որ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի կեանքին մէջ «Մարզիկ»ի ունեցած դերակատարութեան՝ աշխարհասփիւռ մասնաճիւղերը իրարու օղակելու, միութեան գործը ծանօթացնելու եւ անոր խօսքը տարածելու իմաստով: «Մարզիկ»ի դիմագրաւած մարտահրաւէրներուն մասին խօսելով, եղբ. Աւագեան ըսաւ, թէ հակառակ զանազան դժուարութիւններու, «Մարզիկ»ը գոյատեւեց, «որովհետեւ ինքներու իր նոխրութեան հետ մէկտեղ, հաւատքի խորութիւն մը ամբարեց ան իր էջերուն մէջ»: Ան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի արդի պատմութեան հարուստ վկայարան մը ըլլալու կողքին, «Մարզիկ»ը իր հրատարակութեան առաջին օրէն եղաւ «Հ.Մ.Ը.Մ-ական հաւատքի, ապրումի, խոռվքի վկայութիւն մը»: Ապա, եղբ. խմբագիրը անդրադարձաւ թերթին ապրած զարգացումին եւ կատարելագործման, որոնք հպարտութիւն ներշնչեցին ընթերցողին, որով նաեւ հպարտացաւ

«Մարզիկ», որ քարոզչութեան կարիքը չունեցաւ, որովհետեւ իր հունձքը՝ 25 տարուան 280 թիւերը իրեն համար քարոզչութեան լաւագոյն միջոցը հանդիսացան:

25 ամեակի հանգրուանին մասին արտայայտուելով, եղբ. Աւագեան նշեց, որ թէեւ օրերը փոխուած են, սերունդները փոխուած են, սակայն դժուար

ութիւնները չեն փոխուած եւ արդարաւարչաւ կը շարունակուի: «Այսօր կարգը հասած է նորերուն, որպէսզի այս անգամ իրենք ընթանան «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի նամբէն, հաւատքով ու գիտակից խանդավառութեամբ»:

Եղբ. Աւագեան նշեց, որ այսօր «Մարզիկ»ի դիմաց կան կեանքի պահանջներուն հետ քայլ պահելու եւ միեւնոյն ատեն ժամանակ չճանչցող արժէքներու շեփորահարը մնալու մարտահրաւէրներ: «Այսպէս, 25ամեակէ 25ամեակ «Մարզիկ»ի արգելարչաւ պիտի շարունակուի: Նորերը պիտի յաջորդեն հիններուն, Հ.Մ.Ը.Մ-ի ազգային տեսլականներուն դրօշը բարձր բռնած, ամիսէ ամիս մեզ քայլ մը աւելի բարձրացնելով մեր կեանքին մէջ, մեր կեանքին համար, հայ ժողովուրդի կենսունակութեան եւ յաղթանակին համար», եզրափակեց եղբ. Աւագեան (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 12):

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան կատարեց յուշանուէրներու փոխանցում՝ թերթի հիմնադիր սերունդի անդամներուն կամ անոնց ընտանեկան պարագաներուն, ինչպէս նաեւ՝ բոլոր անոնց, որոնք իրենց ներդրումն ու նպաստը ունեցած են «Մարզիկ»ի վերելքին ու գոյատեւման (յուշանուէր ստացողներուն ցանկը տեսնել էջ 9):

Այս առիթով, եղբ. Մկրտիչեան յայտարարեց նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան որոշումը՝ միութեան



ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐՆԵՐ

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչություն,
Պեյրուր-Լիբանան,

Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի Վարչությունը սրտանց կը շնորհաւորէ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնին բացումը՝ յաջողութիւն մաղթելով ձեր նուիրեալ գործունէութեան:

Նոյն ատեն, վարչութիւնս կը շնորհաւորէ «Մարզիկ» ի 25ամեակը, խմբագրական կազմի անդամներուն մաղթելով ուժ եւ կորով՝ շարունակելու համար թերթին հրատարակութիւնը:

«Մարզիկ»ը տարիներու ընթացքին եղած է հայ մարզիկին եւ սկաուտին միտքը պայծառացնող եւ հոգին խանդավառող թերթը, եղած է դաստիարակը, կրթողը, եղած է քաջայերողը, ներշնչողը, լոկ լրատու մը չէ ան, այլ՝ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութիւնը փոխանցողը:

Կրկին անգամ կը շնորհաւորենք եւ կը մաղթենք յարատեւութիւն եւ յառաջդիմութիւն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՍԻ
ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յարգելի խմբագիր «Մարզիկ»ի
Եւ հաւատաւոր անդամներ «Մարզիկ»ի յանձնախումբի,

Մեծ ուրախութեամբ կը շնորհաւորեմ «Մարզիկ» ի 25ամեակը: «Մարզիկ»ը եւ կը նկատեմ ձեւարան մը, որմէ չես կրնար աւարտել եւ չես կրնար վկայագիր ստանալ, որովհետեւ այն ուսումը, զոր կը ստանաս «Մարզիկ» ի յօդուածներէն, վերջ չունի, շնորհիւ զոհողութեանը այն խմբագիրներուն, որոնք անցնող քառորդ դարուն թերթին անսահմանօրէն ծառայեցին եւ դեռ կը շարունակեն ծառայել:

«Մարզիկ» ի մէջ տպուած յօդուածները կը ցոյցանեն միութեան մարզական ոգին եւ սկաուտական ասպետական առաքինութիւնները:

«Մարզիկ»ը կրնան կարդալ ոչ միայն Հ.Մ.Ը.Մ.ի անդամները, այլ լեւ՝ ամէն անձ որ ինքզինքը հայ կը կոչէ: «Մարզիկ» ի նման ամսագիր մը չունի հայ ազգը: Ոեւէ հայ պատանի կամ երիտասարդ «Մարզիկ» ի յօդուածները կարդալով՝ պիտի ներշնչուի Հայկապեան ոգիով:

Հակառակ յառաջացած տարիքիս, ես անհամբեր կը սպասեմ թերթին յաջորդ թիւը. չէ՞ որ «Մարզիկ» ի ջամբած դաստիարակութիւնը վերջ չունի: Խնդրեմ, շարունակեցէք ձեր սրբապան գործը: Չեպի պիտի վարձատրեն գալիք սերունդները: Իրենց հպարտ կեցուածքով անոնք պիտի ըլլան գիտակից հայորդիներ, մի՛շտ պատրաստ ծառայելու հայ ազգին եւ հայրենիքին:

«Բարձրացի՛ր-բարձրացուր»:

Նիւ Ճրբլի

Եղբայրական ջերմ բարեւներով՝
ԱՆԴՐԱՆԻԿ ՏԷՐ ՕՀԱՆ ՆԷՍԵԱՆ

«Արժանեաց» շքանշանով պարգեւատրելու եղբ. Վահէ Չոքկարեանը, որ 1947-1962 եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Հայկապի փառքի օրերու կերտիչներէն մէկը (եջ 22-24 տեսնել իր հետ կատարուած յատուկ հարցազրոյցը եւ «Մանօթացման անդամաքարտ»ը):

Առողջական պատճառներով ձեռնարկէն բացակայող եղբ. Չոքկարեան, իր պատգամը արձանագրած էր խոսասալիկի մը, որ ցուցադրուեցաւ այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ական վառ ապրումներու լաւ տրամադրութիւններ ստեղծելով ներկաներուն մօտ:

Հանդիսութեան փակման խօսքը արտասանեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան: Ան դիտել տուաւ, որ «Մարզիկ»ը մէկ արտայայտութիւնն է Հ.Մ.Ը.Մ.ին եւ անոր իսկական հայելին է: Գաղութները իրարու օղակած Հ.Մ.Ը.Մ.ն ու անոր ոգին շօշափելի կը դառնան «Մարզիկ» ի էջերուն մէջ, եւ այս մէկը կատարելը կ'ենթադրէ գործ: Իսկ գործ մը իր ետին ունի աշխատող ձեռքեր ու անձեր, որոնք տոգորուած պէտք է ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի ոգիով եւ միութեան դաստիարակութիւնը փոխանցեն սերունդներուն: Այս առաքելութիւնը շատ կարեւոր եւ հիմնական է: Գեղամ Եպս. Խաչերեան հաստատեց, որ «Մարզիկ» ի ճամբով Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան հաղորդակից կը դառնան նոր սերունդները, հիմնադիր սերունդին դիմագրաւած մարտահրաւէրներուն մասին տեղեակ ըլլալով կը սորվին չընկրկել եւ շարունակել անոնց սրբազան ուղին, որ կերտուեցաւ մեծ զոհողութեամբ եւ դժուարութիւններով: Հ.Մ.Ը.Մ.ը իր բնութեամբ մարտահրաւէր է մարտահրաւէրի, հաստատեց Առաջնորդը, դիտել տալով որ նման միութիւն մը եւ իր կառույցները ատակ են շրջանցելու ամէն խոչընդոտ՝ իրագործելու համար իրենց նպատակները եւ հասնելու համար աւելի լաւին ու կատարեալին:

Իր խօսքը եզրափակելով, Գեղամ Եպս. Խաչերեան բարի երթ եւ յաջողութիւն մաղթեց «Մարզիկ»ին, որ ոչ միայն միութեանական շունչ կը փոխանցէ, այլ լեւ՝ հայեցի դաստիարակութեամբ սերունդներ կը կերտէ:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



«ՄԱՐԶԻԿ»Ի 25ԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԱՆՈՒԷՐԻՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

■ **ԼԻԲԱՆԱՆ** _____

Երուանդ Տէմիրձեան (յետ մահու) *

Վարուժան Մուրատեան (յետ մահու) *

Յովհաննէս Տէր Յարութիւնեան (յետ մահու) *

Կարօ Թիրթիւնձեան (յետ մահու) *

Վիգէն Աւագեան

Պատրիկ Կիւլպէնկեան

Բիւզանդ Թորիկեան

Պետրոս Շեմձեան**

Արօ Մոսիկեան

Սեդա Պէշլեան

■ **ՍՈՒՐԻԱ** _____

Զաւէն Սապունձեան (յետ մահու) *

Վիգէն Գապարեան

Մեղրիկ Ապահունի

■ **ՃՐԱՆՍԱ** _____

Յարութիւն Գեղարդ (յետ մահու) ***

Հրաչ Սիսեռեան

Շանթ Ոսկերիչեան
Սեւան Նալպարեան
Ժորժ Գալփաքեան
Յարութ Պազգալեան

■ **ԱԹԷՆՔ** _____

Կարպիս Գոլյումձեան

■ **ՍԻՏՆԻ** _____

Յովհաննէս Մարտոյեան

■ **ԳԱՆԱՏԱ** _____

Մոսիկ Թոփուլեան

Լեւոն Պէնկեան

Տիրան Շահինեան

Զարեհ Տէրվիշեան

■ **ՔՈՒԷՅԹ** _____

Յովհաննէս Աւագեան

■ **ՅՈՐԳԱՆԱՆ** _____

Ալին Պէննէեան

■ **ՊՈՒԼԿԱՐԻԱ** _____

Խորէն Քիրապեան

■ **ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ** _____

Զաւէն Թորիկեան
Յակոբ Խաչատուրեան

■ **ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ** _____

Վարդգէս Տէր Կարապետեան (յետ մահու) *

Պարգեւ Շիրինեան (յետ մահու) *

Սամուէլ Մկրտիչեան

Մարօ Քէշիշեան

Նիկոլ Արզումանեան

Արփի Անանեան

*Յանձնուած իրենց հարապատ-
ներուն:

**Ձեռնարկէն բանաւոր բացա-
կայութեան պատճառով, հետագա-
յին յանձնուած իր բնակարանը այ-
ցելութեան մը ընթացքին:

***Յանձնուած քրոջը՝ Սոնա
Արապեանին, Պէյրութի իր բնակա-
րանը այցելութեան մը ընթացքին:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ՄԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻԶԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ԿԵԴՐՈՆԻՆ ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, 17 ՄԱՐՏ 2006ԻՆ)

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութեան անունով բարի գալուստ բոլորին, վերանորոգուած ու բարեկարգուած մեր կեդրոնէն ներս, ուր հաւաքուած ենք նշելու նաեւ «Մարզիկ» պաշտօնաթերթի 25ամեակը: Լիբանանեան տնտեսական տագնապի այս օրերուն, երբ քաղաքացին կը պայքարի իր աւօրեայ ապրուստին համար, կեդրոնի մը բարեկարգման մասին մտածելն իսկ քաջութիւն կ'ենթադրէ: Սակայն կան որոշ անհրաժեշտութիւններ, որոնց իրագործումը առաջնահերթ կարեւորութիւն կը ներկայացընէ: Այդպիսին է Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութեան նստավայրին բարեկարգումը:

Համագաղութային կառույցի վերածուելէ ետք, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութիւններուն համար մտահոգութիւն եղած է մնայուն կեդրոն մը ունենալու պարագան, որովհետեւ 1974էն ի վեր անոնք գործած են առանց մնայուն եւ նպատակայարմար նստավայրի մը, եւ այդ պատճառով այլ այլ նիւթը եղած է ժողովներու մնայուն օրակարգի հարց: 1983ի Ապրիլէն մինչեւ Օգոստոս 1985, Կեդրոնական վարչութեան նիստերը կը գումարուին Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրութի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերուն ու Պուրճ Համուտի «Մարդարապատ» ակումբին մէջ: Յունիս 1984էն սկսեալ, ժողովները կը գումարուին Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանի սրահներէն մէկուն մէջ, որ Ազգային Առաջնորդարանին կողմէ առժամեայ կերպով կը տրամադրուի Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութեան, իբրեւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրատուն:

Նոյեմբեր 1984ին, Կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեան կը մեկնի Լոս Անճելըս, Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի Ներկայացուցչական ժողովին ներկայ գտնուելու: Այցելութեան ընթացքին, եղբ. Վարդգէս Ալահայտոյեանի հետ խորհրդակցաբար, երկուքով ընդունելութիւն մը կը կազ-



Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

մակերպեն եղբ. Ալահայտոյեանի բնակարանը եւ կը յաջողին Կեդրոնական վարչութեան մնայուն նստավայրի մը գնման ֆոնտին ի նպաստ հանգանակել ինը հազար ամ. տոլար: Ապա, եղբ. Տէր Կարապետեան ներկայ կը գտնուի նաեւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութեան լիազումար նիստին եւ տեղույն վրայ կը հանգանակուի 3900 ամ. տոլար՝ ի նպաստ՝ կեդրոնի մը գնման ֆոնտին:

1985ի սկիզբը կ'իրականանայ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութեան ծրագիրը եւ կ'ամբողջանայ 150 քառ. մեթր տարածութեամբ յարկաբաժինի մը գնման աշխատանքը: Շինարարական եւ կահաւորման աշխատանքները կ'ամբողջանան Մայիս 1986ին, Հ.Մ.Ը.Մ.Ի բոլոր շրջաններուն նիւթական աջակցութեամբ:

31 Յունուար 1987ին տեղի կ'ունենայ կեդրոնին բացման հանդիսութիւնը, հովանաւորութեամբ՝ Մեծի Տանն Կիլիկի-

իոյ այդ օրերու Կաթողիկոս՝ Գարեգին Բ. Վեհափառին եւ նախագահութեամբ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ, այժմ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Արամ Արք. Քէչիչեանին: Կեդրոնին գլխաւոր սրահը կը վերածուի Թանգարանի եւ կը կոչուի «Վարդգէս Տէր Կարապետեան սրահ»՝ ի յիշատակ Կեդրոնական վարչութեան նահատակ ատենապետին:

Բնականաբար, տարիներու ընթացքին կեդրոնը կը հիննայ եւ բարեկարգման կը կարօտի: Ներկայ Կեդրոնական վարչութեան առաջնահերթ նպատակներէն մէկը եղաւ այդ բարեկարգման իրագործումը: Արդարեւ, Կեդրոնական վարչութեան առաջին լիազումար ժողովին, որ գումարուեցաւ Եգիպտոսի մէջ, արծարծուեցաւ կեդրոնի բարեկարգման անհրաժեշտութիւնը եւ որոշուեցաւ իրագործել աշխատանքը: Կեդրոնական վարչութիւնը ուրախուցիւ ընկալելու ունեցաւ Եգիպտոսի մէջ իսկ ստանալու «Թիթմոր» բարեկարգման ֆոնտին, յանձինն Հ.Մ.Ը.Մ.Ի Եգիպտոսի եղբայրներէն՝ Վարուժան Գազանճեանին, որուն յաջորդեց դարձեալ Եգիպտոսէն՝ եղբ. Ճէքի Կէվրէկեանի նուիրատուութիւնը: Կեդրոնական վարչութեան

նստավայրի եղբայրները Պէյրուս վերադարձին դիմեցին Հ.Մ.Ը.Մ.ին միշտ իր անվերապահ աջակցութիւնը ցուցաբերած Պուրճ Համուտի քաղաքապետութեան, որուն դրական պատասխանը խթանը հանդիսացաւ աշխատանքին ձեռնարկման: Բարեգարդման աշխատանքներուն իրենց կարեւոր ներդրումը ունեցան Փարիզէն եղբ. Հրաչ Սիսեռեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներէն եղբ. Ժիրայր Սարգիսեան: Անոնց միացան նաեւ այլ Հ.Մ.Ը.Մ.ականներ, որոնք եւս իրենց աջակցութիւնը չզլացան կեդրոնի բարեգարդման աշխատանքին:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութիւնը այսօր ուրախութիւնը ունի ձեզ հիւրընկալելու իր վերանորոգւած ու բարեգարդուած կեդրոնին մէջ, նշելու նաեւ «Մարզիկ» պաշտօնաթերթի 25ամեակը: «Մարզիկ» անցնող 25 տարիներուն եղած է Հ.Մ.Ը.Մ.ի շունչն ու ոգին փոխանցող ամսաթերթը: Ան այսօր կը սօսէ իր հիմնադրութեան 25ամեակը:

Մեր ընդունելութեան, իր նախորդներուն նման, ներկայութեամբը մեզ կը պատուէ Թեմիա բարեջան Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան: Մեզ կը պատուէ նաեւ Պուրճ Համուտի քաղաքապետ եղբ. Անդրանիկ Մսրըլեան, Հ.Մ.Ը.Մ.ական այլ բարեկամներու կողքին:

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութիւնը շնորհակալու-

թեան խօսք ունի փոխանցելիք կեդրոնին բարեգարդման օժանդակած անցեալի եւ ներկայի բոլոր նուիրատուներուն, ինչպէս նաեւ ներկաներուն, որոնք միշտ աջակցած են Հ.Մ.Ը.Մ.ին:

Բոլորին վարձքը կատար:

ՄՏԱՅԱՆՔ

ՖՈՒՏՔՈՒԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ
Հեղինակներ՝ Ռոլանտ Ծառոյեան,
Արսէն Բաբայեան, Գագիկ Եղիազարեան:
«Գէորգ-Հրայր» ՍՊԸ, Երեւան, 2005:

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՉ
ՄԱՆՆԱԳԻՏԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ
Կազմեց՝ տոքթ. Սուրէն Ն. Պայրամեան
Գահիրէ, 2005:

ՔԵՐԹՈՒՎԾՆԵՐ ՄՕՐ ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ
Նիկոսիա, 1998, քաղեց՝ Յարութիւն Անմահունի:

We Can Light Up A City

G. AYANIAN & SONS
Electricity
Pumps
Lighting
Air Conditioning
Video Phone

— G. AYANIAN & SONS —
BEIRUT

Dora: 01-255 222/3/4/5/6 Gemmayze: 01-447 000 - 447 940 Mobile: 03-627 728/9
Fax: 01-265 187 - 582 357 E-mail: gasons@dm.net.lb www.ayanian.com

ԻՔՐԵՒ ՆՈՐ ՄԿԻՉՔ ՅԱՌԱՋՂԻՄՈՒԹԵԱՆ

(ՅԱՆՈՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, «ՄԱՐԳՐԻԿ»Ի ԽՄԲԱԳԻՐ ԵՂՔ. ՎԻԳԷՆ ԱՒԱԳԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԹԵՐԹԻ 25ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, 19 ՄԱՐՏ 2006ԻՆ)

Եթէ չըլլային տարեդարձները, հաւանաբար անհրաժեշտութիւնը չզգայինք անդրադառնալու կարգ մը երեւոյթներու եւ խորհրդածելու անոնց շուրջ:

Տարբեր չէ «Մարգրիկ»ի 25ամեակի պարագան, որ առիթ կու տայ խօսելու Հ.Մ.Ը.Մ.Ի մասին ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան այս հրատարակութեան մասին յատկապէս:

25 տարեկան է այսօր Հ.Մ.Ը.Մ.Ի պաշտօնաթերթը: 1980ին, երբ կը հիմնուէր «Մարգրիկ»ը, Հ.Մ.Ը.Մ.ը արդէն 62 տարուան կեանք ունէր, անհատին մէջ մարդը կերտող եւ մարդուն մէջ հայր դարբնող պատկառելի միութիւն էր, սակայն անոր կը պակսէր աշխարհասփիւռ մասնաճիւղերը իրարու օղակող, միութեան գործը ծանօթացնող եւ խօսքը տարածող միջոցը:

Հիմնադիրները կը վկայեն, որ դիւրին չեղաւ «Մարգրիկ»ի ծնունդը: Թերթին ծնունդ տալու համար տարիներու աշխատանք տարուեցաւ, հող ու միջնորդ տպատրաստուեցաւ: Նախ կառուցային իր վերջնական ձեւը գտաւ Հ.Մ.Ը.Մ.:՝ օժտուելով Կեդրոնական Վարչութեամբ, որմէ ետք բնական ու իրաւական հանգամանք ստացաւ թերթը իր ծնունդէն իսկ առաջ:

Ծնունդին նման դժուար եղաւ «Մարգրիկ»ի կեանքը՝ լիբանանեան պատերազմի թէ խաղաղութեան տարիներուն: Հեւքոտ ու երկար վազք մը ապրեցաւ ան, տեսակ մը արգելադրաւ: Դիմագրաւեց բազմաթիւ դժուարութիւններ, սակայն 25 տարի յարատեւեց, որովհետեւ նիւթերու իր ճոխութեան հետ մէկտեղ, հաւատքի խորութիւն մը ամբարեց ան իր չէրուն մէջ:

«Մարգրիկ» ընթերցողներուն հասաւ հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու մտածողութեան հիւթով, քրտինքով ու նուիրումով: Տարուէ տարի ան կատարելագործեց ինքզինք, ջանաց մարզական թէ սկստական գրականութեան ճամբով նորահաս սերունդներուն ազգային նկարագիր ու դիմագիծ տալ, հայրութեան եւ Հայաստանին պատկանելու գիտակից հպարտութիւնը ներշնչել:

Յաջողեցա՞ւ «Մարգրիկ», վճիռը կը մնայ ձեզի, յարգելի ընթերցողներ:



«Մարգրիկ»ի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան:

Ձեզի, որ անցնող 25 տարիներուն «Մարգրիկ»ի կողքին եղաք, իսկ «Մարգրիկ»ը՝ ձեր կողքին: Մէկը միւսով հպարտ:

Ձեզի, որ ամէնէն աւելի Հ.Մ.Ը.Մ.ի ոգին փնտուեցիք այս թերթին մէջ, որովհետեւ հաւատացիք, որ անհրաժեշտը ոգին է, Հ.Մ.Ը.Մ.ը ստեղծողն ու զարգացնողը նիւթականը չէ:

Ձեզի, որ ամէն թիւի մէջ Հ.Մ.Ը.Մ.ական նոր յաղթանակներու արձագանքներ սպասեցիք, որովհետեւ անոնց մէջ հայկականութեան մեծ ապրում եւ հպարտութիւն գտաք:

Եւ վերջապէս Ձեզի, որ սուրի նման փայլուն գրիչներ եւ ոսկիի նման հնչիւն խօսքեր փնտուեցիք թերթին մէջ:

Յաւակնութիւնը չունինք, չենք կրնար ունենար յայտնելու, որ «Մարգրիկ» անթերի հրատարակութիւն մը եղաւ:

Իրատես պէտք է ըլլալ մեր ակնկալութիւններուն մէջ:

Արդար պէտք է ըլլալ մեր գնահատումներուն մէջ:

Անպայման որ ընկերակումներ կամ թերացումներ եղան, սակայն անոնք բնական արտայայտութիւնը եղան այն դժուարութիւններուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի դէմ ցցուեցան առհասարակ:

Արդարեւ, որեւէ թերթ, ընկերութեան մը հայելին է: Ան կը ցոլացնէ ընկերութեան մը առօրեան՝ իր պայծառ ու մոլթ երեսներով: Թերթին էջերէն յստակօրէն կ'երեւին գեղեցիկն ու տգեղը, լաւն ու վատը: Իրականութիւն փնտուող հարկ է որ այդ հայելին առնէ իր պատկերները:

Թերթը ընկերութեան մը ձայնն է: Արտայայտիչը անոր տաղանակներուն եւ յոյսերուն, յաջողութիւններուն եւ ճախողութիւններուն: «Ձայն բազմաց ձայնն... մամուլի»:

Թերթը մտածող ընկերութեան մը ուղեղն է, միտքն է: Ընկերութեան մը մտածողութիւնը կը պատրաստէ, խելքը կը հարստացնէ, մարդոց մտքին ու խելքին սնունդ կու տայ: Ինչպէս որ մարմինը չ'ապրիր առանց օդի, ջուրի եւ սնունդի, միտքն ալ չ'ապրիր առանց թերթի:

Այս բոլորն է թերթը ու դեռ աւելին. առաքելութիւն է, պատիւ է, նկարագիր է ան: Տարբեր բան չի վկայեր «Մարգրիկ»ի 25 տարիներու հունձըը՝ Հ.Մ.Ը.Մ.ի արդի պատմութեան հարուստ վկայարանը, որուն վրայ հպանցիկ ակ-

նարկ մը բաւարար է հաստատելու, որ հաղորդակցութեան ընթացիկ միջոց մը ըլլալէ աւելի, «Մարզիկ» իր հրատարակութեան առաջին օրէն եղաւ Հ.Մ.Լ.Մ.ական հաւատքի, ապրումի եւ խռովքի վկայութիւն մը: Ան ջանաց սերունդներ իրարու շարժապետ, արձանագրել սերունդի մը հեւքը ու դառնալ պատմութեան համար կարեւոր ատաղձ, մաքուր եւ անվիճելի:

Ասիկա քարոզչութեան հարց չէ: Քառորդ դարու կեանք ունեցող թերթ մը անպայման այս ձեւի քարոզչութեան կարիքը չունի: Անոր հունձքը լաւագոյն քարոզչութիւնն է, իսկ այդ հունձքը մէջտեղ է ահա՛. 25 տարուան մէջ 280 թիւ: Տասնեակներով հաւատարիմ ու հաւատաւոր աշխատակիցներ: Բանակ մը բաժանորդներու, նուիրատուներու եւ ընթերցողներու, որոնք թիկունք կը կանգնին թերթին, բաժնեկցելով անոր ճամբան, երկա՛ր ու փշոտ ճամբան:

25ամեակի հանգրուանն է այսօր:

Արգելարչաւը չէ վերջացած, կը շարունակուի:

Սերունդները փոխուած են, սակայն դժուարութիւնները՝ ոչ: Այսօր կարգը հասած է նորերուն, որպէսզի այս անգամ իրենք ընթանան «Բարձրացիր-բարձրացուր»ի ճամբէն, հաւատքով ու գիտակից խանդավառութեամբ:

25 տարի առաջ, Հ.Մ.Լ.Մ.ականի ոգին եւ գաղափարական անսպառ հարստութիւնը թերթին հրատարակիչներուն միակ դրամագլուխն էր:

Հ.Մ.Լ.Մ.ի նո՛յն դրամագլուխն է թերթին այսօրուան ու վաղուան յաջողութիւններուն գրաւականը:

25ամեակի հանգրուանն է այսօր, եւ ամէնէն աւելի թերթին հիմնադիրներուն եւ երկարամեայ պատասխանատուներուն ձայնն է որ կը հնչէ մեր ականջներուն, - ձայնը Վարդգէս Տէր Կարապետեաններուն, Երուանդ Տէմիրճեաններուն, Վարուժան Մուրատեաններուն, Յովհաննէս Տէր Յարութիւնեաններուն, Կարօ Թիւթիւնճեաններուն եւ Յարութիւն Գեղարդներուն, որոնք արդարօրէն հարց կու տան մեզմէ իւրաքանչիւրին, թէ որքանո՞վ կը շարունակենք իրենց բացած ուղին: Որքանո՞վ տէր կը կանգնինք թերթին, ու որքանո՞վ կը նպաստենք անոր նիւթական թէ բարոյական վերելքին:

Անպայման որ կը գտնուի կարեւոր խաւ մը ընթերցողներու, որ ամէն ամիս կը սպասէ թերթը, կ'ընթերցէ գալն ու հոգեկան սնունդ կը ստանայ անկէ: Բայց անդին կայ շատ աւելի մեծ թիւ մը անտարբերներու, որոնք մոռցած են, թէ այս թերթին ճամբով ամսական կապ մը ունին հաստատելիք այն միութեան հետ, որ կ'ապրի ամէնուն շունչով, բոլորին համար:

25ամեակը շարժառիթ է բոլորիս համար, պարտակալութեան հրաւէր, թերթին հանդէպ մեզմէ իւրաքանչիւրին յանձնառութեան ուխտը նորոգելու, քանի համոզւած ենք, որ «Մարզիկ»ի նման հրատարակութեան մը յարատեւութիւնը ապահովելու համար պէտք է միշտ պատրաստ ըլլալ տոկալու եւ պայքարելու: Բարձրանալու եւ բարձրացնելու:

25ամեակի հանգրուանն է այսօր: Յարմարագոյն առիթով, որպէսզի թերթը, իբրեւ հայ մամուլի մէկ անդամ, խօսի իր ընթերցողներուն հետ, խօսի իր անդամներուն եւ համակիրներուն հետ, որպէսզի գնահատումը կատարէ իր երթին, սրբագրէ իր թերիները եւ նոր սկիզբ մը նշէ յառաջդիմութեան:

Այսօր, առանց հեռանալու իր հիմնադրութեան օրերու ազգային-միութենական առաջադրանքներէն, «Մարզիկ» կը դիմագրաւէ նոր պահանջներ եւ հրամայականներ:

Պահանջներէն առաջինը կը բխի այն իրականութենէն, որ Հ.Մ.Լ.Մ.ական կամ համակիր նոր սերունդը միութենական իր կազմաւորումով, առօրեայ հետաքրքրութիւններով եւ մտահոգութիւններով նոյնը չէ՝ ինչ որ էին քանի մը տասնամեակ առաջուան սերունդները: Չարմանալի պիտի ըլլար հակառակին իրողութիւնը: Հետեւաբար, այսօր, աւելի քան երբեք, կարիքը կը զգացուի թերթին ճամբով Հ.Մ.Լ.Մ.ական նոր կեանքը ձեւաւորող նոր խօսքի եւ մտածումներու:

Երկրորդ, «Մարզիկ»ի ենթահողը Հ.Մ.Լ.Մ.ի գաղափարախօսութիւնն է, իր արժէքներով եւ սկզբունքային առաջադրանքներով, սակայն այդ ենթահողին վրայ գործող թերթը ունի իր անմիջական պահանջները: Ընթացիկ ծախսեր, ցրուումի եւ ծանուցումի հարցեր, մարդուժի եւ թեքնիք կարելիութիւնները- զորս պէտք է բաւարարել լաւագոյն ձեւով՝ կարենալ ապահովելու համար անոր բնական զարգացումը:

Երրորդ, բոլորս կը նկատենք, որ ինչպէս մեր կեանքի գանազան մարգերուն մէջ, մամուլը պարագային եւս վերջին տարիներուն ստեղծուած են նոր արժեքափեր, որոցմէ դուրս՝ ինքնանպատակ ու ժամանակավրէպ ամէն մօտեցում ժամանակի եւ կարելիութիւններու զուր մխտում է, իսկ մեր կեանքը այլեւս չի կրնար դիմանալ նոր մխտումներու եւ ժամավաճառութիւններու:

Հետեւաբար, ձայնասփիւռի, պատկերասփիւռի եւ արբանեակային հաղորդակցութեան միջոցներու ճնշիչ տիրապետութեան այս օրերուն, «Մարզիկ» պարտաւորութիւնը ունի տեւաբար ինքզինք փորձաքարի գարնելու, բովանդակութեան եւ մատուցման ձեւի նորութիւններով քայլ պահելու համար կեանքի արդիականացման նոր պահանջներուն հետ: Միաժամանակ, նախանձախնդիր ըլլալով, որ չեփորահարը մնայ արժէքներու, որոնք ո՛չ ժամանակ կը ճանչնան, ո՛չ ալ աշխարհագրական սահման: Կու գան հինէն, բայց չեն հիննար, կ'երթան ապագային, ու չեն աժաննար:

Այսպէս, 25ամեակէ 25ամեակ «Մարզիկ»ի արգելարչաւը պիտի շարունակուի: Նորերը պիտի յաջորդեն հիներուն, Հ.Մ.Լ.Մ.ի ազգային տեսլականներուն դրօշը բարձր բռնած, ամիսէ ամիս մեզ քայլ մը աւելի բարձրացնելով մեր կեանքին մէջ, մեր կեանքին համար, հայ ժողովուրդի կենսունակութեան եւ յաղթանակին համար:

Փա՛ւք «Մարզիկ»ը ծնող միութեան, պատի՛ւ գալն պահողներուն:

«ՄԱՐԶԻԿ»Ի ԲԱԶԿԵՐԱԿԸ ՏՐՈՓԱԾ Է ՀԱՅ ԿԵԱՆՔԻ ԿՇՌՈՅԹՈՎ

(«ԱԶԴԱԿ»Ի ՏՆՕՐԷՆ՝ ՇԱՀԱՆ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ «ՄԱՐԶԻԿ»Ի 25ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, 19 ՄԱՐՏ 2006ԻՆ)

Հայ մամուլի կարեւոր մէկ ներկայացուցիչին հիմնադրութեան 25ամեակին նշումը տարաբնոյթ մտածումներու տեղի կու տայ: Մանաւանդ որ՝ այս պարագային կ'անդրադառնանք թերթի մը, որ յատուկ մարզի մը յատկացուած ըլլալու հանգամանքով, աւելի ընդհանուր եւ իւրապատուկ բովանդակութիւն բերեցողացած է ժամանակի ընթացքին:

Եւ ճիշդ հոս է, որ առաջին դիտարկումը այս երեւոյթին պատճառականութեան մասին մտածելու կը հրաւիրէ բոլորս: Առաջին հայեացքով, եւ առանց բովանդակութեան խոր քննարկումի, թերեւս այն թիւր տպաւորութիւնը կրնանք ունենայ, որ թերթը ամսական յաճախականութեամբ մարզական լրատուութիւններու ընդհանուր ամփոփում կատարելու պարտականութիւնը ունի հիմնականին մէջ: Թերթին անուանումն ալ արդէն որոշ ձեւով պիտի հունակորէր այս մտածողութիւնը:

Լուռ ենթադրութիւն մը կը հետեւի առաջին տպաւորութեան. համադրական խմբագրական աշխատանքի մը ամսական յաճախականութեամբ կատարուող մարզական լրատուութիւններու ծաղկաքաղի աշխատանքը չի համընկնիր մամուլի հեւքոտ ու դժուարին աշխատանքի ընթացքին: Եւ այս բոլորին լոյսին տակ, մարզական կեանքին նկատմամբ հետաքրքրութեան պակաս ունեցող հայ անհատը անհրաժեշտութիւնը պիտի չզգայ թերթատելու եւ կարդալու «Մարզիկ»ը:

Այս արագ մօտեցումը, բնականաբար, չի համապատասխաներ իրականութեան: «Մարզիկ»ը միայն մարզիկին կամ մարզաձեւերով զբաղողին թերթը չէ: Անուանումը որեւէ ձեւով չի սահմանափակեր ո՛չ խորքը, ո՛չ բովանդակութիւնը, ո՛չ արժարժած հարցերուն հորիզոնը, ո՛չ ալ մանաւանդ խմբագիրներուն տեսադաշտը:



«Ազդակ»ի տնօրէն Ծախան Գանտահարեան:

«Մարզիկ»ը հասարակական, միութենական, գաղափարական ուղղութեամբ թերթ է ըստ էութեան, եւ ատով իսկ բոլոր նախադրեայներն ու պատճառները ունի հանդիսանալու հայ հանրային կարծիքի ձեւաւորման գործընթացներուն վրայ ազդեցութիւն ունենալու միջոց մը:

Եւ երբեմն այնքան շեշտուած է թերթին ա՛յս երեսը, այնքան ընդգրծուած է սերունդներու դաստիարակութեան համար անհատական եւ ազգային առումներով առաքինութիւններու փոխանցումի ոճը, որ այս անգամ հակառակ ուղղութեամբ հետեւողը կրնայ մտածած ըլլալ, որ ինքը գործ ունի զուտ միութենական-գաղափարական պաշտօնաթերթի մը հետ:

«Մարզիկ»ը, սակայն, սքանչելի ձեւով գտած է մարզական, սկստական, միութենական եւ ազգային պարունակներու առաջադրման եզ-

րերուն ոսկի միջինը: Իր էջերը հարստացած են նշուած բոլոր մարզերով, որոնք խորքին մէջ արտացոլացումն են Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան բազմաբնոյթ եւ բազմբերս գործունէութեան: Եւ եթէ հարազատ է արտացոլացումը, յաջողած է ուրեմն տուեալ միութեան ստեղծած թերթին առաքելութիւնը:

«Մարզիկ»ի խմբագրականները ազգային մեր կեանքի զանազան երեաներուն անդրադարձող յաջողած են իւրապատուկ ոճ, ըսեյաձեւ եւ բովանդակութիւն ապահովել թերթին: Երեւոյթներուն սուր կերպով անդրադառնալու, թերիները մատնացոյց ընելու եւ հրապարակային քննադատութիւն զարգացնելու առողջ մօտեցում որդեգրած են «Մարզիկ»ի խմբագրական պատասխանատուները: Սկստական եւ մարմնակրթական մարզերէն աւելին, շատ աւելին ներառած է «Մարզիկ»ը իր էջերուն մէջ:

Դիպուկ ոճի եւ համարձակ բովանդակութեան ամէնէն յատկանշական խմբագրականներէն է «Աշխատանքի բաժանում» խորագիրով գրութիւնը: Այս իւրապատուկ ոճն է

եւ փնտռուած բովանդակութիւնը, որ կը տարածուի «Մարգիկ»ի առաջնորդող յօդուածներուն վրայ եւ կը բնութագրէ այս պաշտօնաթերթը:

Այս գրութիւնը յստակ ախտորոշում կը կատարէ մեր հանրային իրականութեան, կ'ընդգծէ երեւոյթին տուն տուող պատճառները եւ կառուցողական մօտեցումով կը հրամանէ ճիշդ ուղին որդեգրելու ընտրանքը: Այսպէ՛ս, «Իբրեւ ժողովուրդ թէ միութիւն,- կը գրէր «Մարգիկ», - մեր իրականութեան մէջ աշխատանքի բաժանումը միշտ չէ, որ գոհացուցիչ ձեւով կատարուած է եւ ատկէ նաեւ՝ յանախ ուժերու սխալ եւ անհամապատասխան դասաւորումը:

«Մեր ազգային-միութեան կողմէն գործերուն մէջ ցարդ տիրողը մեծ մասամբ պատահականութիւնը եղած է,- կը շարունակէ խմբագրականը,- շատ անգամ անհատներու համար է որ գործ կը հայթայթուի, փոխանակ գործին յարմարագոյն անձը փնտռելու, վեր՝ ամէն նկատումէ եւ շահախնդրութենէ: Կը բաւէ, որ նման անխոհեմ կարգադրութեամբ մարդիկ պաշտօնի կոչուին եւ ահա կարն ժամանակէն փտախոր, բարոյական թէ նիւթական սնանկութիւնը կը սկսին իրենց ներկայութիւնը գգալի դարձրնել: Այլոց մօտ, սովորաբար, պատասխանատու պաշ-

տօններ ձեռք կը ձգուին վարչագիտական լուրջ պատրաստութենէ եւ մասնագիտական աշխատանքներէ ետք, մեր մօտ սակայն, մարդու թի տագնապը մէկ կողմէ եւ հայ կեանքի դժբախտութիւնները միւս կողմէ՝ նախանձով դիտել կու տան նման բան»:

Այս բոլորին արդիւնքը անկանոն եւ անկազմակերպ աշխատանքներու յառաջացում տեսնելէ ետք, խմբագրականը կը հաստատէ. «Ժամանակն է, որ աւելի լաւ կարգ ու կանոն դրուի ազգային-միութեան կողմէ գործերուն մէջ, յստակօրէն գծուին աշխատանքի բաժանման սահմանները եւ պատահականութիւններէ ու քմայքներէ հեռու կատարուին գործերը, այնպէս մը որ անոնց արդիւնքը ըլլայ իսկապէս գգալի եւ օգտակար»:

Խորքին մէջ, նման ոճով եւ բովանդակութեամբ, անկախ հանրային կեանքի որոշ երեսի մը հարազատ բնութագրումը կատարելէ, «Մարգիկ»ը իր այս վարքագիծով մամուլին, հայ մամուլին նաեւ պատգամներ կը փոխանցէ: Գաղութիւն եւ ազգային կեանքին առնչուած զանազան երեւոյթներու մասին հրապարակային քննարկում կատարելու, քննական միտք զարգացնելու եւ առողջ ինքնաքննադատութեան կարգով հարցերուն էութեան մասին խօսելու: Բայց ինչպէս «Մարգիկ»ը ինք ըրած է զանազան առիթներու, ախտորոշումներուն, խիստ սլաքներուն, երեւոյթներուն բերած անպատեհութիւններուն մասին քննարկում կատարելէ ետք, ցոյց տուած է ճիշդ ուղին. հանրային կեանքը աւելի առողջ հիմերու վրայ դնող ուղին: Առանց այս վերջինին կատարուածը հաւանաբար կը վերածուէր ինքնանպատակ քաշքշուքի: Բայց «Մարգիկ»ի նախընտրած ընթացքը կառուցողական ենթահողի վրայ կը տեղադրէ քննադատութեան ոգին՝ առողջ ոգին, որուն նպատակն է սրբագրել հասարակական կեանքի համակարգը:

Պատահական չէ, որ այս առիթով լուսարձակի տակ կը բերենք այս խմբագրականին տողերուն մէջ ամփոփուած մտածողութիւնը: Յատկանշական է այս մէկը. թերեւս ամէնէն յատկանշականը, որովհետեւ կը բնութագրէ ամբողջ ոճ մը, ամբողջ բովանդակութիւն մը, որ «Մարգիկ»ինը եղաւ անպայման եւ առանձնացուց այս պաշտօնաթերթը հայկական ամսաթերթերուն մէջ:

«Մարգիկ»ը ինքզինքին իրաւունք վերապահած է այս դիպուկ արտայայտութիւնները հրապարակելու: Ի վերջոյ մատնացոյց ընելու եւ սրբագրութեան ուղղութիւններ կայացնելու բարոյական իրաւունք կ'ունենայ այն, որ առաջարկածը ինք կ'օգտագործէ իբրեւ դրութիւն եւ աշխատելաձեւ:

Այդպէս է այս պարագային:

ԱՐՉԱԳԱՆԳ

«Մարգիկ» պաշտօնաթերթի

Պատուարժան խմբագրութեան,

Մեր պարբերաթերթին 25ամեակին նուիրուած թիւը վերջապէս գտայ նամակատուփիս մէջ եւ վայն հետաքրքրասէր արտոնարանով աչքէ անցրնելէ ետք, սրտաբուխ ցանկութեամբ մը ուզեցի տարուած աշխատանքը գնահատել ըստ արժանոյն:

Առ այդ կ'արձանագրեմ, որ «Մարգիկ»ի 25ամեայ կեանքին մշտագոյ խոչընդոտները յաղթահարած, խմբագրական, աշխատակցական, տնտեսական ներդրումներու ճամբով երախտաւոր եղբայրներու էջերու վրայ տարածուած պատկերաշարը վերածուած է ոգեղէն յիշատակարանի:

Քառորդ դարու ջանադիր կեանքի մը պատմութիւնը ամփոփ, բայց առարկայական ու ամբողջական ձեւով մատուցուած է խմբագրութեան կողմէ:

Վերջապէս, 25ամեակի թիւը, իր տեսքով ու լիցքով, արդարահատոյց գնահատանքի արժանացած կը տեսնեմ շատ մը շրջաններու վաստակաւոր եղբայրներու սրտաշէն խօսքերով:

Նաեւ, կրկնակ ուրախութեամբ կը հաստատեմ, որ «Մարգիկ»ի աշխատանքը, գաղափարախօսական, շրջանէ-շրջան փոխ-ծանօթացումներով՝ յարաբերական եւ «մենք»ի մտածումին կենսագործումին ճամբով, հետպիտեմ առաւել ուշադրութեան ու գնահատանքի կ'արժանանայ:

Ի սրտէ կը շնորհաւորեմ ներկայացուած իրագործումը եւ կը մտադրեմ, որ վաղը աւելի ճանջուի «Մարգիկ»ը եւ հասկցուի անոր վստահուած դերը ու բոլորին (յատկապէս ձեռք) հետեւողական ու անսակարկ ճիգերով առաւել ծառայէ Հ.Մ.Ը.Մ.ի նուիրական առաքելութեան:

Սան Խոսէ

Եղբայրօրէն՝

ՏՈՔԹ. ՄԻՍԱԲ ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ

«Մարգրիկ»ի բազմերակը տրոփած է հայ կեանքի կշռոյթով: Համահայկական մակարդակի վրայ արձանագրուած իւրաքանչիւր հիմնական իրադարձութիւն անպայման իր համապատասխան արձագանգը գտած է Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթին մէջ: Համասփիւռքեան աշխատանքներէն մինչեւ Հայաստանի երկրաշարժ ու Հայաստանի անկախացում: Հ.Մ.Ը.Մ.ի հայրենացումէն մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի գանազան ձեռնարկներու համահայկականացում, «Մարգրիկ»ը ամենայն հարազատութեամբ յաջողած է քայլ պահել իր պատկանած միութեան գործադատին մէջ արձանագրուած իւրաքանչիւր նուաճումին հետ:

Ուժերու ճիշդ եւ համապատասխան գնահատումով, գործածելով «Մարգրիկ»ի բաւամթերքը, այս պաշտօնաթերթը յաջողած է աշխատանքային բաժանում կատարել իմբպրական, վարչական, գրաշարական եւ տպագրական իմաստներով: Տակաւին, համակարգուած աշխատանքային բաժանումի հիման վրայ ճշգրտած են մարզական, սկաուտական, ազգային բաժինները, միջազգային մարզական թէ սկաուտական լրատուութիւնները, Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան տեղեկատուն: Հարիւրաւոր թիւերու հրատարակութեամբ, «Մարգրիկ»ը յաջողած է պահել իւրաքանչիւրին չափաբաժինը, գտնել ոսկի միջինը, քայլ պահել համահայկական հրատապ հարցերուն հետ, հետեւիլ հայաստանեան իրեն վերաբերող գործունէութեան, արձագանգել անոնց եւ իւրաքանչիւր գաղութի մէջ

Հ.Մ.Ը.Մ.ի տարած գործունէութիւնը իր էջերու ճամբով հասցնել աշխարհի չորս անկիւնները:

Այս բոլորին արդիւնքը կանոնաւոր եւ կազմակերպ աշխատանքի յառաջացում ստեղծած է, պիտի ըսէինք, դարձեալ փոխ առնելով «Մարգրիկ»ի ըսելաձեւերը:

Պէտք է մտահան ընենք անշուշտ, որ «Մարգրիկ»ի 25ամեայ անխափան երթը, անոր կարգապահ կշռոյթին ապահովումը, բովանդակութեան հարստացումը, հայրենացումն ու համահայկականացումը, աշխատանքային գործնապաշտ բաժանումն ու մարդուժի ճիշդ օգտագործումը ներշնչուած են եւ ուղղակի վերահսկուած հայ կեանքի մէջ գործող եւ անկէ անբաժան՝ սքանչելի, կուռ, կազմակերպ եւ տասնեակ հազարաւոր անդամներ հաշուող կառոյց է մը, որ կը կոչուի Հ.Մ.Ը.Մ., առանց որուն հայ կեանքը ընդհանրապէս նոյն ձեւով պիտի չկարենար շնչել:

Այդ անասան կաղնիին գոյութեան շնորհիւ ապահով ենք, որ ուրոյն ոճով եւ բովանդակութեամբ հայ մամուլ հասկացողութիւնը հարստացուցած «Մարգրիկ» ամսաթերթը պիտի շարունակէ նշել իր 50ամեակներն ու 100ամեակները, Հ.Մ.Ը.Մ.ի իրերայաջորդ տարբեր սերունդներուն հետ:

Բարի երթ «Մարգրիկ»ին: Վարձքը կատար անոր 25ամեայ իրագործումներուն մէջ ցրումի, գրաշարական, տպագրական, վարչական, իմբպրական եւ ամէն տեսակի ներգրում ունեցած հաւատաւոր բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

BDF ●●●●

SAL AGENT EXCLUSIF. Tel: 09-214507/9/10

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ՝ ԵՂՔ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՐԴԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ 21 ՄԱՐՏ 2006ԻՆ,
ՓԱՐԻՉԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ
ՏԱՃԱՐԻՆ ՄԷՉ, Հ.Մ.Ը.Մ.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
ԵՂՔ. ԼԵՒՈՆ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ ԿՈՂՄԷ)

Սգակիր բարեկամներ,
Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ,

Կայծակնային լուրը շանթահարեց Հ.Մ.Ը.Մ.ի համայն
ընտանիքը՝ ի հայրենիք եւ ի սփիւռս աշխարհի:

Յարուժիւն Գեղարդ ոչ եւս է:

Հայաշունչ ընտանիքի գաւակ, տոթթ. Յարուժիւն Գա-
զանճեան իր մանկութենէն սկսեալ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի
հարազատ միջավայրին մէջ, երբ տակաւին կը յաճախէր
Պէյրուժի Սուրբ Նշան Ազգային վարժարանը, ապա՝ Հա-
մազգայինի Հայ Ճեմարանը:

Վաղ տարիքէն ան ըմբռնեց Հ.Մ.Ը.Մ.ական դաստիա-
րակութիւնը, որ իր հուժեան անբաժան մասնիկը եղաւ իր
կեանքի ամբողջ տեսողութեան:

Սկստական շարքերէն սկսեալ, ան քայլ առ քայլ
բարձրացաւ միութեան նուիրապետական կարգերը, հաս-
նելու համար բարձրագոյնին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական
Վարչութեան անդամակցութեան, մինչեւ 1995 թուական:
Բարձրացաւ ու Հ.Մ.Ը.Մ.ի անզուգական նշանաբան՝
«Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ը իր առօրեայ կարգախօսը
դարձուց, մտողաչ սերունդները առաջնորդելու համար
Հ.Մ.Ը.Մ.ի լուսազէմ հիմնադիրներու գծած ուղիէն:

Միութեան պաշտօնաթերթ «Մարգիկ»ին իր աշխատակ-
ցութիւնը եղաւ յարատեւ, փնտռուած ու սիրուած՝ ընթեր-
ցողներուն կողմէ:

ՅԱՒԱԿՑԱԳԻՐՆԵՐ

Գահիրէ, Եգիպտոս

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,
Սիրելի վշտահար եղբայրներ,

Խոր ցաւով տեղեկացայ վաստակաւոր Հ.Մ.Ը.-
Մ.ական եղբայր տոթթ. Յարութիւն Գազանճեա-
նի (Յ. Գեղարդի) մահուան գոյժը: Մեծ է կորուս-
տը Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիռ ընտանիքին:

Հասարակական գործիչ, մտաւորական եւ
Հ.Մ.Ը.Մ.ական անխոնջ նուիրեալ եղբ. Գեղարդի
շիջումով կ'անհետանայ իր հասակակից սերուն-
դի ներկայացուցիչներէն մէկը եւս, եթէ ոչ՝ վեր-
ջինը:

Թող անոր վաստակը ներշնչման աղբիւր
դառնայ ապագայ սերունդներուն համար:

Յաւակցութիւններս ողբացեալ եղբոր անմի-
թար հարապատներուն:

Վշտակցութիւններս Ձեզի եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ
ընտանիքին:

Մնամ վշտակից՝
Եղբայրական ողջոյններով
ՏՈՔԹ. ՍՈՒՐԷՆ ՊԱՅՐԱՄԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,
Յարգարժան եղբայրներ,

2006ի առաջին եռամսեան սուգի շրջան մը
եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին համար, որ
կորսնցուց հաւատաւոր երկու եղբայրներ՝ Կարօ
Թիթիւնճեանը եւ Յարութիւն Գեղարդը, Լիբա-
նանի եւ Ֆրանսայի մէջ: Երկուքը յաւիտ բաժնը-
ւեցան մեզմէ, իրենց ազգային պարտականու-
թիւնը յաւազոյսս կատարելէ ետք:

Կորուստներուն ցաւը, որքան ալ կսկծալի,
առիթ եւ հրաւէր պէտք է ըլլայ երիտասարդու-
թեան, ազգին գիտակից եւ ուսեալ տարրին, որ-
պէսպի գրաւէ մեկնողներուն տեղը եւ բարձր պա-
հէ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը, որուն հովանիին տակ ահա-
գին գործ կայ կատարելիք Հայաստանի եւ գա-
ղութներու մէջ:

Աստուած լուսաւորէ իրենց հոգիները, մի-
թարութիւն եւ կորով տայ մեզի՝ շարունակելու
միութեան ազգօգուտ գործը:

Հատեթ

Մնամ ցաւակից՝
ՅԱԿՈՒԲ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Լուսամիտ գաղափարախօս, անշեղ միութենական, գիրքի ու խօսքի վարպետ, եղբ. Գեղարդ յաճախ գործ ու տուն ձգած՝ ծառայեց Հ.Մ.Ը.Մ-ին, ծանօթացնելու համար իր սիրելի միութիւնը հայ թէ օտար միջավայրերուն: Երբ իրեն վստահուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ը ներկայացնել Համաշխարհային Սկստակական Շարժումին մօտ, եղբ. Գեղարդ բազմիցս թակեց ժընեկի միջազգային գրասենեակին դուռը եւ յաջողեցաւ Հ.Մ.Ը.Մ-ը ընդունել տալ իբրեւ սկստակիզմն ու մարմնակրթանքը նոյն յարկին տակ կիրարկող կազմակերպութիւն, ճամբայ բանալով միջազգային ընտանիքէն ներս Հայաստանի սկստակական շարժումին ընդունման:

Սգակիրներ, այսօր եղբ. Գեղարդ յաւէտ կը բաժնուի մեզմէ, Հ.Մ.Ը.Մ-ի շարքերէն ներս ձգելով զգալի բաց մը, միաժամանակ մեզի փոխանցելով ջաշ մը, որ այսուհետեւ երիտասարդ սերունդին պիտի վստահուի:

Իսկ հիմա, երբ կը պատրաստուինք եղբօր անշունչ մարմինը իր բնօրրանէն՝ Լիբանանէն հեռու օտար հողին յանձնելու, յանուն Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ-ական շարքերուն, մեր խոր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալին այրիին՝ տիկին Էլիզապէթին, գաւակներուն՝ Վահէին, Գառնիկին, Արշոյին եւ անոնց ընտանեկան պարագաներուն ու կ'ըսենք. հողը թեթեւ գայ վրադ, սիրելի՛ եղբ. Գեղարդ:

ՊԱՏԳԱՄ

Հայ մարտիկէ մը, հայ մարտիկուհիէ մը որքան որակաւոր խաղ, նոյնքան եւ աւելի մաքուր ու ամրակուռ նկարագիր կը պահանջուի, նախ՝ հպարտութիւն եւ յոյս ներշնչելու այգակիցներուն, ապա՝ հնայք ստեղծելու շրջապատին մէջ, եւ արժանացնելու մեր ժողովուրդը օտարներու գնահատանքին: Դաշտին վրայ, թէ դաշտէն դուրս՝ կեցուածք, զոր մարդը կը յայտնաբերէ գնդակին ետեւէն վազող, գնդակը հարուածող անհատին մէջ:

Մարտաշխարհը լայն պողոտայ մը կը բանայ հայ երիտասարդութեան առջեւ՝ հասնելու համար միջազգային բեմ եւ Հայր ճանչցնելու, պարտադրելու աշխարհին:

Հայ երիտասարդութիւնը յանձնառութիւն մը ունի միշտ, ինչ ասպարէզի ալ ծառայէ, ու իր գերագոյն հաճոյքը՝ իր դերը լաւագոյնս կատարելու մէջ պիտի փնտռէ:

Խաղ, յաղթանակ, արդար իրաւունք: Բայց, խումբին ու ակումբին ճամբով այգին ու հայրենիքին յաւերժութիւնն ու փառքը ապահովելը՝ գերագոյն նպատակակէտ:

Այս է մեր պահանջը Հ.Մ.Ը.Մ-ի աղջիկներէն ու տղոցմէն:

Յ. ԳԵՂԱՐԳ

FREDDY KARAGEUZIAN

"ONNIG OF CAIRO"
Egyptian Museum


Tahrir Square - Cairo

Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: freddy@gega.net

ՄԱՅՈՒՆ ՆԵՐԿԱՆ

(ԵՂԲ. ԵՐՈՒԱՆԴ ՏԷՄԻՐՃԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ 10ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Եղբ. Երուանդ Տէմիրճեանի մահուան 10ամեակին առիթով եւ Էշրէֆիէի (Լիբանան) Հ.Յ.Գ. «Ազադամարտ» Կոմիտէին նախաձեռնութեամբ, 18 Մարտի 2006ին Կեդի ունեցաւ յիշատակի հանդիսութիւն մը, որուն ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան արեւնապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Սրորեւ խօսքին գլխաւոր մասերը, իբրեւ յարգանքի եւ երախտի արտայայտութիւն անոր, որուն անունը սերտօրէն կեպուած կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ի եւ «Մարզիկ»ի բազմաթիւ յաջողութիւններուն:



Ժ ողովուրդի մը պատմութիւնը կը կերտուի իր հաւաքականութեան մէջ ապրող այն մարդոց մով, որոնք անջնջելի հետքեր կը ձգեն իրենց յաջողութիւններուն վրայ: Եղբ. Երուանդ Տէմիրճեանը մէկն է անոնցմէ, որ ոչ միայն անջնջելի դրոշմ ձգեց իր ետին, այլեւ՝ բոլորս անվարան կը հաստատենք, որ ան տակաւին կ'ապրի՝ ու կենդանի է մեր մէջ:

Դժուար է արտայայտուիլ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական եղբ. Երուանդին մասին: Բառերն ու տողերը բաւարար չեն ներկայացնելու իր վարկն ու կարողութիւնները: Սակայն թուե՛նք եղբ. Երուանդին միութեանական ծառայութեան բնագաւառները՝ գայլիկ, սկառտ, մարզիկ, ախոյեան, վարչական, ատենապետ, քարտուղար Շրջանային Վարչութեան, քարտուղար Կեդրոնական Վարչութեան, «Մարզիկ»ի խմբագիր, յօդուածագիր, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական խոսակցական եղբայր, ժողովներու մնացույց ներկայութիւն՝ ուզես կամ չուզես, «կուռազան»՝ միութեան հաշուոյն, սուր վէճերը հանդարտեցնող, ժողովական եւ կարգապահական հարցերու մէջ բժախնդիր եւ տակաւին տէրը թագուն եւ ծանօթ այլ կարողութիւններու, որոնք բոլորը կարելի չէ թուել մէկ առ մէկ:

Հակառակ անոր որ տասը տարիներ անցած են եղբոր մեծ կորուստէն, սակայն անոր խօսքերը անժամանցելիօրէն կը հնչեն մեր ականջներուն մէջ եւ, ինքնաբերաբար, մեր շուրջիներուն հաղորդակիցը կը դարձնենք զանոնք, յատկապէս մեր ընդհանուր ժողովներուն, ըսելով, որ եթէ եղբ. Երուանդը ողջ ըլլար՝ «այսպէս պիտի ըսէր... կամ այնպէս պիտի ըսէր...»:

Եղբ. Երուանդ ունէր այն բացառիկ կարողութիւնը, որ երբ խօսէր, զինք լսողները բնագոյաբար իրմով կը հմայուէին: Կախարդական շունչով մը ան կը թափանցէր անոնց հոգիներէն ներս եւ կը յաջողէր օրուան պատգամը, խորհուրդը կամ հանգամանաւոր խօսքը հասցնել բոլորին եւ յատուկ դրոշմ մը կը ձգէր անպայման անոնց մէջ:





Եղբ. Երուանդ գուարճախօս, պերճախօս, գրաւիչ ու դիւթիւ ռճ մը ունէր իր խօսելու եղանակին մէջ, բայց ունէր նաեւ խարազանող եւ անողոք կեցուածք՝ սխալներու եւ թերութիւններու նկատմամբ, կը տագնապէր, կ'անհանգստանար:

Վարչութեան կողմէ ան արժանացաւ միութեան «Արժանեաց» շքանշանին:

Տասնամեակներ ալ անցնին, եղբ. Երուանդ Տէմիրճեան միշտ կը մնայ մեր կեանքին մէջ, իբրեւ ո՛ղջ իրականութիւն:

Երբ ըսելիք ունենար, բառերը երբեք չէր ծամծամեր, ոչ ոքի կը խնայէր: Կ'ատէր կեղծիքը: Այս բոլորը կու գային իր անշեղ նկարագիրէն, զոր ստացած էր իր հաւատացած եւ պաշտամունքի առարկայ դարձած Հայ Յեղափոխական Դաշնակցութենէն եւ Հ.Մ.Ը.Մ.էն:

Եղբ. Երուանդ օժտուած էր նաեւ մարդկային սրբազնագոյն յատկանիշներով, որոնցմէ յատկանշական էր այն, որ գիտէր ներողութիւն ըսել. բան մը, որ մարդու հոգիի մեծութեան ցուցանիշն է:

Եթէ երբեք հաշուենք եղբ. Երուանդին կատարած գործերը եւ մտաւորական աշխատանքները, պիտի տեսնենք, թէ անոնք բազում են ու անհամար՝ իր գործած բոլոր մարգերուն մէջ: Այսպէս, կրնանք հաստատել, որ եղբ. Երուանդը «Մեծ» մարդ էր, որուն համար ալ 1995ին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY **Armavia**
Արմավիա

Photos: © Yarm Arnhue-Bertrand / Ag. Terre vue du Ciel. Licence 075 960031. StudioVIZIER 2007-2005

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
saber@arminco.com

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՆ

Պետրոս Շեմսեւեան ՊԷՅՐՈՒԹ

«3. Դաշտերէն ներս թէ դուրս, կարգապահ ու քաղաքավար է, միջազգային «Ֆէր փլէյ»ի ն տիպարն է»:

Մարզական միջազգային Ֆետերասիոնները միայն վերջին տարիներուն անդրադարձան, որ մարզախաղերը միշտ չէ որ կը խաղցուին մարզավայել եւ օրինակելի չափանիշներով, մարզական ոգիով: Ամէն գնով ախոյեանութեան ձգտելու եւ հասնելու միջոցին մէջ խտրութիւն չդնելով, յաճախ դաշտերու վրայ տեղի կ'ունենայ ոչ մարզավայել, անօրէն ու խելագար մրցակցութիւն: Երեւոյթ մը, որ խոտոր կը համեմատի թէ՛ կազմակերպիչներու նպատակին եւ թէ՛ մարզական մրցակցութեան ոգիին, այդ մտահոգութեամբ ալ

«մարզական ոգի» արտայայտութիւնը վերած-
լած է որեւէ մրցակցութեան մաքուր եւ տիպար
չափանիշի:

Բոլոր մրցակցութեանց հիմնական նպատակը
մաքուր ու առողջ մտքով եւ առողջ մարմնով մար-
զիկ պատրաստել է: Խարդախութեամբ եւ անօրէ-
նութեամբ ձեռք բերուած իւրաքանչիւր մրցում,
մետալ կամ բաժակ, կազմակերպիչ մարմնին կողմէ քաջալը-
րանք մըն է սուտին, խարդախութեան եւ անբարոյութեան:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին պարագային, «Ֆէր փլէյ»ը,
կարգապահութիւնը, քաղաքավարութիւնը ունին կրկնակի
իմաստ եւ կարեւորութիւն, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը մարզա-
կան նուաճումներէ առաջ եւ վեր ունի ազգային գաղափարա-
խօսութիւն եւ ազգային պատկանելիութիւն:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերով Հ.Մ.Ը.Մ.ը երբեք
չի նպատակադրեր մարզական ազգային եւ միջազգային
մրցանիշներ հաստատել, այլ՝ այդ խաղերուն կարեւորու-
թիւնը կը կայանայ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին պատկանող
աշխարհացրիւ անդամներու մէկտեղումին եւ սրտակցու-
թեան մէջ: Հիմնականը այն է, թէ մասնակիցները ապրին ու
զգան իբրեւ մէկ հաւաքականութիւն, իբրեւ հայութեան ան-
քակտելի մասնիկներ: Որքա՛ն խօսուեւ է միջազգային ողիմ-
պիականին կարգախօսը: «կարեւորը մասնակցիլն է»:


Շար.ը տեսնել էջ 33

Travel Ways - Egypt

NILE CROCODILE CRUISES

*Incoming Tour Operator
Hotel & Cruise Reservation
Transportation
Excursions*

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1
from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt
Tel:02 2739400/500/600
www.travelways-egypt.com
marketing@twaysegy.com



ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆԸ ՄԻԱՅՆ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՊԱՏՐԱՍ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ

«ՄԱՐԶԻԿ»-ԻՆ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ
ԵՂՔ. ՎԱՀԷ ԶՈՔԿԱՐԵԱՆ
«ԱՐԺԱՆԵԱՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵԻԱՏՐՄԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Հարաւային Լիբանանի քաղաքներէն Մայրաքաղաքի մէկ արտարչանին՝ Մաժարաթ-իունի մէջ, ուր հազիւ քանի մը հայ զոյուքիւն ունի, լուսարչակներէ հեռու կ'ապրի 85ամեայ ծերունի մը, որ կրնայ ծանօթ չըլլի նոր սերունդին, սակայն անոր անունն ու վաստակը յարգանք եւ պատիւաբան կ'առքեն բոլոր անոնց, որոնք ապրած են Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի ոսկեայ փարիները, երբ իրարու երեսէ նուաճուած յաղթանակներն ու ախոյեանութիւնները ազգային մեծ խանդավառութիւն եւ հպարտութիւն կը ներշնչէին հոգիներուն:

Ծերունին եղբ. Վահէ Զոքիարեանն է, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի երբեմնի փոխ-պրեզիտըն ու պրեզիտըն, հաւաքաւոր Հ.Մ.Ը.Մ.ականը, խոնարհ Դաշնակցականը, որուն յիշողութեանն այսօր բեկորներ միայն մնացած են պատմութեան համար, սակայն կամքէն ու հաւաքքէն բան չէ պակաս, ընդհակառակը՝ փարիներու հետ ան աւելի կառչած է այն արժէքներուն, որոնք միութենական մը իբրեւ միութենական կ'արժեւորեն, հայ մը հայ կը պահեն:

Մտորելու ներկայացուած հարցազրոյցը՝ եղբոր հետ, կատարուած է Մաժարաթիունի իր բնակարանը, Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով պարգևատրուէն չորս օր առաջ:

Յիշատակելի օրերէ նկար մը. եղբ. Վահէ աջէն 4րդը:



Հ.Մ.Ը.Մ.ը 45 տարի ետք կը վերագտնէ ձեզ, եղբ. Վահէ: Ո՞ւր էիք 1961էն մինչեւ օրս:

- 1961ին, Սուրիոյ ծանօթ դէպքերէն ետք, ես փոխադրուեցայ Լիբանան եւ պայմաններու բերումով հեռու մնացի ազգային-միութենական կեանքէ: Գործս ալ պատճառ դարձաւ, որ յաճախ ճամբորդութիւններ կատարեմ եւ հայկական շրջանակէ հեռու մնամ: Ես աշխատեցայ Քուէյթի, Իրաքի, Եգիպտոսի, Սէուտական Արաբիոյ եւ Գանատայի մէջ: 1985ին, հանգստեան կոչուելէս ետք, բնակութիւն հաստատեցի Ռէյֆունի մէջ, իսկ 1994էն ի վեր հոս եմ, Մաժարաթում:

Ի՞նչ գործով զբաղած էք:

- Մեքենագէտ-ճարտարագէտ եղած եմ: Երկար տարիներ Հալէպի երկտրական ընկերութեան գլխաւոր ճարտարագէտը եղած եմ: Լիբանան գալէս ետք, 1968-1969 հսկած եմ Ժիէի երկտրական գործարանին շինութեան: Հայկական ընկերութեան մը հետ մասնակցած եմ Պաապտայի պետական հիւանդանոցին շինութեան, իսկ 1980ականներուն՝ Զուքի երկտրական գործարանին կառուցման:

Գաղթական հայու ճակատագիրը անբաժան եղած է ձեզմէ: Ի՞նչ կը յիշէք ձեր մանկութենէն եւ պատանեկութենէն:

- Ծնած եմ Ատանա: Գաղթականութեան օրերուն ընտանիքս նախ փոխադրուած է Պերլին, կարճ ատեն մը, ապա՝ Ռուսմանիա: Երջան մը ապրած ենք Ռուսմանիոյ Կերլա Քաղաքը, ուր կը յիշեմ տակաւին կային ծագումով հայ կարգ մը տարիքոտ կիներ, որոնք «մենք հայ ենք» կ'ըսէին: Հոն յաճախած եմ հունգարական դպրոց մը: Կերլայէն անցած ենք Պուքրէշ: Այդ տարիներուն, այսինքն՝ 1920ական թուականներուն, Պուքրէշի մէջ 7 հայ ընտանիք կար: Երկու տարի ալ հոն դպրոց գացած եմ:

Իսկ ե՞րբ հաստատուած էք Հալէպ:

- Բաւական ուշ՝ 1947ին: Նախքան այդ, 1931-1947 ընտանիքս հաստատուած է Պէյրուսի եւ ես երկու տարի յաճախած եմ Ս. Նշան վարժարան, իսկ երեք տարի ալ՝ Համազգայինի Հայ Ճեմարան, որուն կը պարտիմ հայկականութիւնս: Ճեմարանի ուսուցիչները՝ Լեւոն Շանթը, Նիկոլ Աղբալեանը, Գառնիկ Գիւզաբեանը եւ միւսները, առանց զգացնելու, մեր սերունդը հայկականութեամբ տոգորեցին:

Ո՞ւր ծանօթացած էք Հ.Մ.Ը.Մ.ին:

Պէյրուսի մէջ, երբ տասը տարեկան էի, 1931ին: Եղած եմ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի սկառու: Խմբապետս Խանճեան անունով մէկն էր: Կը յիշեմ, որ Կիրակի օրերը կը սողանցէինք: Լաւ շեփորահար մը ունէինք, Կոմիտաս անունով՝ էշրէֆիէէն: Շրջան մըն ալ խմբապետ ունեցանք ժիրայր Պէյլէրեանը:

Երեք տարի սկառու ըլլալէ ետք, 1933-1935 մաս կազմած եմ մասնաճիւղին ֆուլթայլի երկրորդական խումբերէն «Մուրատ»ին:

Այդ օրերուն Հ.Մ.Ը.Մ.ը ակումբ չունէր: Շեփորահարներ իր թմբուկները կը դնէր եղբ. Կրէկուար Միգաւետիքեանին խանութը, Մաարատ: Յետոյ փոխադրուեցանք Ս. Նշանէն վեր տեղ մը:

Որո՞նք կը յիշէք «Մուրատ» խումբի ձեր խաղընկերներէն:

- Ե՛ս կայի, Յարութիւն Նալպանտեանը կար: Կեղրոնը Յովհաննէսը կար, աջ ծայրը՝ Սարգիս Մաւրազաբեանը, ձախ ծայրը՝ Նուպար Նազարեանը (հետագային Բարեգործականի բարերար դարձաւ), Գէորգ մը կար: Մեր մարզիչը եղբ. Եղիշէ Մանուկեանն էր:

Ինչո՞ւ այդքան կարճ տեւած է ֆուլթայլիստի ձեր կեանքը:

- Կարճ՝ որովհետեւ Պէյրուսի չմնացի: 1936ին, տարի մը Դամասկոս փոխադրուեցայ, իսկ հոնկէ Հալէպ անցայ: Հալէպ մնացի 1937-1939 եւ հոն մաս կազմեցի ֆուլթայլի պահեստի խումբին:

Շատ լաւ տպաւորուած եմ Դամասկոսի այդ օրերու ֆուլթայլի խումբով:

Անուններ կը յիշէ՞ք:

- Անշո՛ւշտ, բոլորը անձնապէս կը ճանչնայի: Խումբին մաս կը կազմէին բերդապահ Տիգրանը [Արապեան-«Մ.»], Տրդատը, երկուքին ալ մականունը չեմ յիշեր: Կային նաեւ Օննիկ Կէպրէկեանը, Զաւէն Զորպաճեանը, Կիրակոս Գալաճեանը, Տերտինանտ Արալանեանը, Արմէն Աբգարեանը եւ մարաշցի Կարապետ Մելիքովը (Արսլանեան):

Մասնաճիւղին տիրական դէմքը այդ ժամանակ Վահան Տօնապետեանն էր:

Ի՞նչ կրնաք ըսել ձեր երիտասարդութեան մասին:

- Երիտասարդութեան տարիներս, 1937-1947, անցուցած եմ հոս-հոն: Նախ՝ 1937-1939 եղած եմ Դամասկոս: Յետոյ յաճախած եմ Պէյրուսի Ամերիկեան Համալսարան եւ հոնկէ վկայ-

ԾԱՆՕԹԱՅՍԱՆ ԱՆԴԱՄԱՔԱՐՏ

Եղբ. Վահէ Չոքկարեան ծնած է 1921ին, Ատանա: Հալի աչքերը բացած, ծնողքին հետ բռնած է գաղթականութեան ճամբան: Տասնամեակ մը գաղթականութեան պրկանքները ապրած է Ռումանիոյ մէջ:

1931ին, Չոքկարեան ընտանիքը եկած է Լիբանան, ուր 10 տարեկան պատանի Վահէն անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի սկառուական շարքերուն: Երեք տարի եղած է սկառու, ապա մաս կազմած է մասնաճիւղի «Մուրատ» ֆուլթայլի երկրորդական խումբին:

1936ին, տարի մը եղբ. Վահէ կ'անցնի Դամասկոս, իսկ 1937-1939՝ Հալէպ, ուր մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայլի պահեստի խումբին:

Պէյրուսի վերադարձին, եղբ. Վահէ կը հետեւի Պէյրուսի Ամերիկեան Համալսարանի դասընթացներուն եւ 1947ին կը վկայուի իբրեւ ճարտարագէտ: Այնուհետեւ, ան կ'անցնի Հալէպ, ուր բալմիցս կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան անդամ՝ փոխ ատենապետի (1953-1955) եւ ատենապետի պաշտօնով (1952-1953, 1956-1958 եւ 1961-1962):

1961ին, ան կը ձեռքակալուի եւ դառնօրէն կը ճաշակէ բանտային տանջանքներ: Ապա, կը փոխադրուի Լիբանան եւ հետոյ կը մնայ միութենական կեանքէ, սակայն միտքն ու հոգին երբեք չեն դադրիր Հ.Մ.Ը.Մ.ի հետ ըլլալէ:

Նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ական մը ըլլալու կողքին, եղբ. Վահէ կ'ըլլայ հաւատաւոր Դաշնակցական մը: Կը ստանձնէ կուսակցական պատասխանատու պաշտօններ: 1963ին ան կը մասնակցի Հ.Յ.Դ.ԺԸ Ընդհանուր Ժողովին, Պէյրուս:

Լիբանան հաստատուելէ ետք, իբրեւ ճարտարագէտ, եղբ. Վահէ գործի բերումով կը կատարէ բալմաթիւ ճամբորդութիւններ եւ կ'աշխատի պանսպան երկիրներու մէջ. Քուէյթ, Իրաք, Եգիպտոս, Սէնտալան Արաբիա, Գանատա եւ այլն:

1985ին, հանգստեան կոչուելէ ետք, եղբ. Վահէ բնակութիւն կը հաստատէ Լիբանանի ամառանոցներէն Ռէյֆունի մէջ, իսկ 1994էն մինչեւ օրս ան կ'ապրի Սայտայի Մաժտայիուն գիւղը:



ւելէ ետք՝ աշխատած եմ Քեսապի, Համայի եւ տարբեր ըլլողաներու մէջ, մինչեւ 1947, երբ հաստատուած եմ Հալէպ, երկտրական ընկերութեան գլխաւոր ճարտարագէտի պաշտօնով:

Անկասկած, կարեւոր յիշատակներ ունիք Հալէպէն: Կրնա՞ք ներկայացնել այդ օրերու մթնոլորտը:

- Հայկալի միջնորդը բացառիկ էր: Այդ միջնորդը որեւէ տեղ չէք գտներ: Ամէն օր, տուն երթալէ առաջ, անպայման ակումբ կը հանդիպէինք: Ակումբը մեր երկրորդ տունն էր: Մեր ընկերներուն հետ եղբօր պէս էինք: Մեծի-պզտիկի տարբերութիւն չկար: Նոյնիսկ Հրաչ Փափագեանը կը նստէր եւ մեզի հետ նարտի կը խաղար: Հիմա երբ մարդ քիչ մը դիրքի հասնի՝ չես կրնար հետը խօսիլ...:

Հայկալի մէջ չկայ մէկը, որուն ճանչցած չըլլամ: Այդ օրերուն Շրջանային Վարչութեան հասկացողութիւն չկար: Հայկալի մասնաճիւղը պատկառելի գործունէութիւն ունէր: Ես մասնաճիւղին փոխ ատենապետը եղած եմ 1953ին եւ 1955ին, իսկ ատենապետը՝ 1952ին, 1956ին, 1957ին եւ 1961ին: Նաեւ կուսակցական ըլլալու բերումով, ծանօթներս շատ էին: Չեմ կրնար բոլորին անունները յիշել, բայց նաեւ չեմ կրնար մոռնալ Լուսերը (Մասպանաճեան), Նշան Թիւսիւզեանը, Կարապետ Աղճեանը, Սահակ Եղոյեանը, Յարութիւն Պազարպաշեանը, Յովհաննէս Թնճուկեանը, տղթ. Տայեանը, Ճորճ Բարսեղեանը, Գէորգ Աւրանեանը եւ ուրիշներ: Անմիջական շրջանակէս կը յիշեմ նաեւ Աւետիս Ժամագործեանը, «Էսկիմի» Սիմոնը, «Ղամպուր» Պօղոսը, «Լանդր» Եագուպը, «մէշէֆէ-նի»՞ն, Գէորգ Առաքելեանը, Առաքել Թերզեանը եւ ուրիշներ:

Ինչպէս ըսիք, եղած էք կուսակցական: Ե՞րբ եւ ի՞նչպէս մուտք գործած էք կուսակցութեան շարքեր:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

1961 թուական:

Այդ գիշեր Հայկալ քաղաքի մապահէսի- գաղտնի ոստիկանութեան- գետնափոր խցիկներուն, պնտանին մէջ աղմուկ-աղաղակ կար: Նորէն եպներու առնանդամէն շինուած մտրակներով մարդ կը խոշտանգէին: Ու... «Խօսէ՛, խօսէ՛՛ հայրենիքի դաւաճան, այսքան քար ու այսքան կրակ որմէ՞ առիք»: Բայց, երկուստեք եկած հարուածները առիթ չէին տար խօսելու: Վերջապէս, կարճ դադար մը եղաւ ու Հ.Մ.Լ.Մ.ի օրուան ատենապետը՝ աջ ձեռքով լայնդի ձակատին արիւնը սրբեց, երեսը շօշափեց, արիւնլուայ վիճակը դիտեց, նայուածքը յարեց ճիւղ դատաւորին ու խիզախորէն ըսաւ.

- Ես եմ Հ.Մ.Լ.Մ.ի ատենապետը, եթէ Հ.Մ.Լ.Մ.ը այդքան մեծ սխալ մը գործած է՝ ես եմ պատասխանատուն՝ պատժեցէ՛ք զիս, կախեցէ՛ք զիս...

- Լռէ՛՛ սրիկայ, արդէն պիտի կախուիս... եղաւ դատաւորին խօսքը:

Այդ գիշեր, ժամը երեքին մօտ, հոն աւելի պատասխանատու մարդիկ կային, բայց... աչքերս խոնարհած էի գապանային այդ խոշտանգումը չտեսնելու... ու ականջներուս մէջ դեռ կը հնչէ Վահէ Չոքկարեանին խրոխտ ձայնը՝ ես եմ... կախեցէ՛ք զիս:

ՍՄՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉԵԱՆ

- Պէյրութ, ձեմարանի աշակերտ եղած շրջանիս, Նահապետ Չոքքեանը առիթով մը ինծի տարաւ Պէյրութի մեր ակումբը, որ այդ օրերուն կը գտնուէր ձուկերու շուկային մէջ, Պապ Իտրիսէն քիչ մը անդին: Ես մաս կազմեցի «Բաբգէն Սիւնի» Պատանեկան Միութեան: Հայկալ ալ (1937-1939) Պատանեկան Միութեան մաս կազմած եմ: Շարքերու անդամակցութիւնս, սակայն, եղած է Չաւարեան Ուսանողական Միութեան ճամբով, 1941ին: Չաւարեանի մէջ գիս շատ տպաւորած է Բաբգէն Փափագեանը:

1947ին, երբ Հայկալ հաստատուեցայ, կուսակցական պարտաւորութիւններս շարունակեցի: Յաճախ մաս կազմեցի մարմիններու եւ ստանձնեցի պատասխանատու պաշտօններ, մինչեւ 1961ի դէպքերը, երբ ձերբակալուեցայ եւ 15 օր բանտարկուեցայ: Ապա, Լիբանան անցայ եւ հեռու մնացի ազգային-կուսակցական կեանքէ, սակայն կուսակցական չըլլալով՝ մնացի Դաշնակցական եւ այդ ալ՝ «թիթ՛ու Դաշնակցական»:

Տարիներ ետք, երբ հաշուեկշիռը կը կատարէք միութեանական ձեր կեանքի, ի՞նչ կը կարծէք տուած էք Հ.Մ.Լ.-Մ.ին:

- Ինծի համար միայն ծառայելը կարեւոր եղած է: Անկէ անդին, վարչական եղբը եմ կամ ոչ՝ հոգս չէր: Միութեանականը միայն ծառայելու պատրաստ պէտք է ըլլայ: Դրամի եւ աթոռի ետեւէն պիտի չիյնայ: Դրամը ահռելի բան է:

Ի՞նչ թելադրանք ունիք նոր սերունդին:

- Առաջին թելադրանքս լեզուն չմոռնալն է: Ընտանիքներու մէջ միշտ հայերէն պէտք է խօսիլ: Երկրորդ, պէտք է ջանալ միութեան օգտակար ըլլալ եւ գրպանի շահը չհիստուել: Օրինակ, ես շատ ուրախ եմ, որ Ատոմ Թնճուկեանի պէս երիտասարդ մը իր ունեցածէն բաժին հանած է միութեան եւ պատքէթի գեղեցիկ դաշտ մը շինել տուած է Անթիլիասի մէջ: Ասիկա կարեւոր բան է հայը հայ պահելու համար, հայը չտակարանալու համար: Դժբախտաբար, մեր հայ ընտանիքները երբ քիչ մը հարստանան՝ իրենց աչքերը օտար դպրոցներ կը բանան: Ասիկա փորձանք է:

Կը մաղթեմ, որ նոր սերունդը յիշէ Լուսեր Մասպանաճեանը, Կարապետ Աղճեանը եւ Նշան Թիւսիւզեանը, որոնք հետք ու դրոշմ ձգեցին այս միութեան մէջ: Կ'ուզեմ նաեւ, որ նորերը անպայման յիշեն Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան առաջին ատենապետ, նահատակ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանը, որուն երախտիքը մեծ է Հ.Մ.Լ.Մ.ին:

Շնորհակալութիւն եղբ. Սամուէլ Մկրտիչեանին, որ Ամբրիկայէն հետքս գտաւ եւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուց գիս: Շնորհակալութիւն նաեւ Կեդրոնական Վարչութեան, որ յիշեց եւ որոշեց գիս պարգևատրել «Արժանեաց» ջբանջանով:

Բոլորին վարձքը կատար: Շնորհաւորութիւններս «Մարգրիկ»ին, որ այս օրերուն իր հիմնադրութեան 25ամեակը կը տօնէ: Միայն խնդրանք մը ունիմ թերթէն: Յաճախ կը լսեմ, որ Հ.Մ.Լ.Մ.ի մասնաճիւղերուն թիւը հասած է 98ի, կարելի՞ է արդեօք այդ մասնաճիւղերուն անունները տպել թերթին մէջ:

Շատ սիրո՞ւմ ք:

Հ.Մ.Ը.Մ.Ը ԱՅՍՕՐ. 98 ՄԱՍՆԱՃԻՒՂ 24 ԵՐԿՐԻ ՄԷՉ

ՀԱՅԱՍՏԱՆ

1. Երեւան
2. Արմավիր
3. Չարենցաւան
4. Կիւմրի
5. Հրազդան
6. Մասիս
7. Վանաձոր
8. Ախթալա
9. Արմաւիր
10. Ապարան
11. Աշոցք
12. Ախուրեան

ՋԱՒԱՆՔ/ ՎՐԱՍՏԱՆ

1. Ախալքալաք
2. Ախալցխա

ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

1. Լոս Անճելլոս
2. Սան Ֆրանսիսքո
3. Ֆրեյսո («Սասուն»)
4. Մոնթեպելլո
5. Փասատինա («Ալատամարտ»)
6. Կլէնտէյլ («Արարատ»)
7. Օրէնճ Քաունթի («Սարդարապատ»)
8. Սան Ճեռնանո Հովիտ («Մասիս»)
9. Սան Տիէկո («Սեւան»)
10. Ինլընտ Էմփայր («Արաք»)
11. Սանթա Գլարա («Անի»)
12. Սոլթ Լէյք Սիթի («Սպիտակ»)
13. Սաուր Պէյ («Արագած»)
14. Բրեյքնթա Հովիտ («Շանթ»)
15. Պրոպէնք («Սիփան»)
16. Լաւ Վեկա («Արցախ»)
17. Ֆէնիքս
18. Ուոլնաթ Քրիք («Կարս»)
19. Բոյորաուո

ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

1. Ուաշինկթոն
2. Պոսթըն
3. Նիւ Եորք
4. Նիւ ձրքլի
5. Շիքսկո
6. Տիթթոյտ
7. Ֆիլատելֆիա
8. Փրովիտընս
9. Ֆլորիտա

10. Ալպընի

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

1. Պուէնոս Այրէս (Արժանթին)
2. Գորտոպա (Արժանթին)
3. Մոնթեվիտէօ (Ուրուկուէյ)

ԳԱՆԱՏԱ

1. Մոնթրէյլ «Կամք»
2. Համիլթըն
3. Թորոնթօ
4. Քէնպրիճ
5. Սէնթ Գաթթինյ

ԱՒՍՏՐԱԼԻԱ

1. Սիոնի («Անդրանիկ»)
2. Մելպուռն («Արաք»)
3. Արեւելեան Սիոնի («Կամք»)
4. Արեւմտեան Սիոնի («Նաւասարդ»)
5. Սիոնի («Արարատ»)

ՅՈՒՆԱՍՏԱՆ

1. Ֆիքս
2. Գոքինիա
3. Սելանիկ

ՍՈՒՐԻԱ

1. Հալէպ
2. Դամասկոս
3. Լաթաքիա
4. Գամիշլի
5. Բեսապ

ԼԻԲԱՆԱՆ

1. Պէյրութ
2. Թրիփոլի
3. Չահլէ
4. Պուրճ Համուտ
5. Այնճար
6. Ճիւնի
7. Անթիլիա
8. Ժրտէյտի
9. Պաուշըիէ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

1. Սոֆիա
2. Փլովտի
3. Վառնա
4. Ռուսէ
5. Շումէն

6. Պուրկալ

7. Տոպրիչ

ԿԻՊՐՈՍ

1. Նիկոսիա

ԻՐԱԲ

1. Պաղտատ
2. Մուսուլ

ԵԳԻՊՏՈՍ

1. Աղեքսանդրիա «Կամք»
2. Գահիրէ «Արարատ»

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

1. Երուսաղէմ
2. Հայֆա
3. Եաֆա

ՅՈՐԴԱՆԱՆ

1. Ամման

ՔՈՒԷՅԹ

1. Բուէյթ

ՖՐԱՆՍԱ

1. Փարիզ
2. Վալանս

ԱՆԳԼԻԱ

1. Լոնտոն

ԻՏԱԼԻԱ

1. Միլանո

ԱՒՍՏՐԻԱ

1. Վիեննա

ՇՈՒԷՏ


1. Սթոքհոլմ

ՀՈԼԱՆՏԱ

1. Ալմէյօ

ՀՈՒՆԳԱՐԻԱ

1. Պուքրէշ





ԱՄՄԱՆ. ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԵՒ ՅՈՒՇԱՀԱՆԴԵՍ ԵՂԲ. ԵԴՈՒԱՐԴ ՉԱՔՄԱՔՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թղթակից ԱՄՄԱՆ

ՀՄ.Ը.Մ-ի Ամմանի մասնաճիւղի ատենապետ եղբ. Եղուարդ Չաքմաքճեանի մահուան քառասունըը հոգեհանգիստով եւ յուշահանդէսով մը նշուեցաւ Կիրակի, 12 Մարտ 2006ին, Ամմանի Ս. Թաղէոս եկեղեցւոյ եւ ՀՄ.Ը.Մ-ի ակումբին մէջ, ներկայութեամբ այս առիթով Յորդանան ժամանած՝ ՀՄ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեանի, Պատրիկ Կիւլպէնկեանի եւ Գէորգ Կարապետեանի:

Եկեղեցւոյ մէջ, Առաջնորդ Վահան Արք. Թոփալեան մատուցեց հոգեհանգստեան պաշտօն եւ տուաւ քարոզ մը՝ շեշտելով ՀՄ.Ը.Մ-ի կարեւորութիւնը մեր կեանքին մէջ:

Կէսօրին, ներկաները հաւաքուեցան ՀՄ.Ը.Մ-ի ակումբը, ուր տեղւոյն մասնաճիւղին կազմակերպութեամբ տեղի ունեցաւ յուշահանդէս մը, ի յարգանս մասնաճիւղի վերջին հինգ տարիներու ատենապետին յիշատակին:

Յուշահանդէսին ներկայ գտնուեցան Յորդանանի ներքին գործոց նախարարութեան նախկին ընդհանուր քարտուղարը՝ Զոհտի Հասան, ՀՄ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան երեք եղբայրները, մասնաճիւղի վարչութիւնը եւ մեծաթիւ ամմանահայեր:

Այս առիթով խօսք անուելով, յորդանանցի նախկին պետական գործիչը դրուատիքով խօսեցաւ հայութեան մասին ընդհանրապէս եւ եղբ. Չաքմաքճեանի մասին յատկապէս:



Խօսք անաւ նաեւ ՀՄ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ եղբ. Չաքմաքճեանի յիշատակը ոգեկոչելով՝ վկայեց, որ «Եղբ. Եղուարդ եղաւ տիպար, հեզ ու խոնարհ ՀՄ.Ը.Մ.ական մը, որ գործեց անշահախնդրօրէն, գործեց գիտակցելով եւ հաւատալով աշխատանքին տարողութեան, գործեց իրեն գիտակից ՀՄ.Ը.Մ.ական՝ զոհելով իր թանկագին ժամանակէն, միշտ տալով լաւագոյնը»:

Իր խօսքին մէջ, եղբ. Մկրտիչեան անդրադարձաւ անդարձ մեկնած եղբոր միութեանական վաստակին եւ ըսաւ. «Դժուար է ամփոփել անծայրածիր աշխատանքը ՀՄ.Ը.Մ.ական այս եղբոր, որուն կեանքին մէջ ՀՄ.Ը.Մ-ը նուիրական էջ մը եղած է: Եղբայր մը, որ իր տիպար գործունէութեամբ օրինակ հանդիսացած է նորահաս սերունդներուն, անոնց փոխանցելով անսակարկ ծառայելու վսեմագոյն օրինակը: Ան հաւատացած է աշխատանքին եւ այդ հաւատքը փոխանցած է ոչ միայն իր զաւակներուն, այլ նաեւ՝ ՀՄ.Ը.Մ-ի Ամմանի ընտանիքի մեծ ու փոքր անդամներուն: Հայրենիքէն հեռու, հայրենիքի կարօտով գեղուն սփիւռքահայներուն համար ՀՄ.Ը.Մ-ը առաջնորդող փարոս մըն է, որուն համբով սերունդներ իրենց ներշնչումը առին այս մեծ միութեան մեծ նշանաբանէն՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»էն: Եղբ. Եղուարդ եղաւ ՀՄ.Ը.Մ-ի այն սերունդի եղբայրներէն, որոնք օտարութեան խեղդող մթնոլորտին մէջ, իրենց հայանուէր գործունէութեամբ նորահաս սերունդներու հոգիներուն մէջ վառ ու ներկայ պահեցին հայկական արժեքները: Անոնք ծնրադիր երդում կատարեցին Ենթագոյն դրօշին առջեւ, բախտաւոր օր մը Հայաստանի անկախութիւնը ռզնուելու կարօտավառ երագով: Տեսա՛ն անկախութիւնը, վայելեցին զայն, տեսան ՀՄ.Ը.Մ-ի դրօշը եւ Ենթագոյնը Արագածի կատարին, տեսան ՀՄ.Ը.Մ-ի արիւնքուն յաղթական տողանցքը Երեսանի հրապարակին վրայ,



սակայն Սփիւռք մնացին տակաւին, իրենց աչքերը միշտ յառած հոն, ուր անշէջ կը վառի Լուսաւորիչի կանթեղը՝ Արագածի գագաթին: Անոնք եղան ուխտեալ գիւնուորները՝ Հայ Գատին եւ դեսպանները՝ Հայաստանին: Պատիւ իրենց եւ յարգանք իրենց յիշատակին»:

Խօսքին աւարտին, եղբ. Մկրտիչեան եղբ. Եղուարդ Չաքմաքճեանը յետ մահու պարգեւատրեց Հ.Մ.Ը.Մ.ի «Մառայութեան» շքանշանով:

Ընտանիքին կողմէ շնորհակարական խօսք արտասանեց եղբ. Չաքմաքճեանի հարազատներէն Անոյշ Նաքքաչեան (Երուսաղէմէն): Ապա, ցուցադրուեցաւ եղբօր կեանքը եւ միութենական առօրեան ներկայացնող սահիկներու շարք մը:

Աւարտին, մատուցուեցաւ հոգեճաշ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐԸ ԱՄՄԱՆԻ ՄԷՉ

Եղբ. Եղուարդ Չաքմաքճեանի մահուան քառասունքին



Կերրոնական Վարչութեան Եղբայրները Ամմանի վարչութեան հետ:

առիթով Ամման ժամանած Հ.Մ.Ը.Մ.ի Կերրոնական Վարչութեան անդամ եղբայրները՝ Գառնիկ Մկրտիչեան, Պատրիկ Կիւլպէնկեան եւ Գէորգ Կարապետեան, Ամման իրենց կեցութեան ընթացքին հանդիպումներ ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղի վարչութեան, սկառտական խմբապետական կազմին, ՀՕՄի վարչութեան եւ Հ.Բ.Ը.Մ.ի պատասխանատուին հետ:

Յայտենք, որ եղբ. Եղուարդ Չաքմաքճեանի փոխարէն, մասնաճիւղին վարչութեան այժմ

մաս կը կազմէ գաւազը՝ եղբ. Բաֆֆի Չաքմաքճեանը, իսկ մասնաճիւղի նոր ատենապետ ընտրուած է եղբ. Կարո Հետէմեան:

Կերրոնական Վարչութեան եղբայրները այցելեցին նաեւ Ամմանի արուարձաններէն մէկուն մէջ գտնուող այն վանքը, որուն յարկին տակ կը ծրագրուի կատարել Հ.Մ.Ը.Մ.ի Միջին Արեւելքի վարչութիւններու դիւանական ժողովը, յառաջիկայ Սեպտեմբերին:

Maison Mere
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt
Tel: (202) 3913296 - 3918542
Fax: (202) 3903899

Ramses Hilton
Tel: (202) 5758000 - 5744400
Direct: (202) 5751790

Zamalek
11 Hassan Sabry st., Degla center
Tel: (202) 3322121 - 3322130
Fax: (202) 3322130

VARTAN KAZANDJIAN

KAZANDJIAN

E-mail: vartan@intouch.com **Joillier-Orfevre Fonde en 1920**



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՌԱՏՐԱԼԻՈՅ ՇՐՋԱՆԻ ԵՒ «ԱՆԴՐԱՆԻԿ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 40ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՀԵՂ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ՍԻՏՆԻԻ ՄԷՉ

Յովհաննէս Մարտոյեան ՍԻՏՆԻ

Հ.Մ.Ը.Մ.ական եռուն կեանքի չորս տասնամեակներ խառնող տպաւորիչ հանդիսութիւն մը եղաւ Շաբաթ, 18 Փետրուար 2006ին Սիտնիի «Հիլթըն» պանդոկին մէջ կազմակերպուած փառահեղ սօնակատարութիւնը, որ նուիրուեցաւ Աւստրալիոյ շրջանի եւ Սիտնիի «Անդրանիկ» մասնաճիւղի հիմնադրութեան 40ամեակին:

«Անդրանիկ» մասնաճիւղի վարչութեան կողմէ կազմակերպուած այս սօնակատարութեան ներկայ եղան աւելի քան 350 Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիրներ, որոնք օրուան իմաստը արժեւորելու, անցեալի յուշերը իրարու հետ բաժնեկցելու եւ մանաւանդ՝ Հ.Մ.Ը.Մ.ավայել հայաշունչ երեկոյ մը վայելե-



Զախէն աջ՝ եղբայրներ Պերն Մոմճեան, Արսէն Հէքիմեան, Յովհաննէս Մարտոյեան, Սարգիս Տէր Պետրոսեան, Դրօ Մոմճեան, քոյր Գլատիս Պէրէճիքեան, եղբայրներ Ծորն Արոշեան, Յակոբ Քորթեան, Հերոս Գրիգորեան եւ Վարուժան Ծաւահիրճեան:



լու հոգեկան բաւարարութիւնը ունեցան: Ներկաներուն բացարձակ մեծամասնութիւնը երիտասարդներ էին: Երիտասարդութիւն կը բուրբէր ամէն կողմ: Միջնորդը յուսավառ, հայրենաշունչ, գօտեպնդող ու ոգեշնչող էր: Տօնակատարութիւնը սկսաւ մաս-

Զախին՝ Տօնակատարութեան հանդիսավար եղբ. Էլի Բանոյեան: Աջին՝ «Անդրանիկ» մասնաճիւղի դրօշակակիրներ՝ Վիվիան եւ Դանիէլ Տէր Թաղէտեաններ:

նաճիւղի երկու երէց սկառուներու սրահ մուտքով: Համաչափ քայլուածքով, բեմին մօտենալով, Աւստրալիոյ եւ Հայաստանի դրօշները յատուկ արարողութեամբ մը գետեղուեցան բեմին երկու կողմերը: Մեծ պաստառի մը վրայ երեւցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շուշանածաղիկը: Հնչեց Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգ՝ «Յառաջ նահատակ»ը, որուն մեծ ոգեւորութեամբ ձայնակցեցան ներկաները:



ԲԱՅՄԱՆ ԽՕՍՔԸ

Տօնակատարութեան բացման խօսքը կատարեց եղբ. էլի Բանոյեան: Ան ողջունեց օրուան հիւրերը՝ նիւ Սաութ Ուէյլը նահանգի խորհրդարանի անդամ քոյր Գլատիս Պէրէճիքեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-

Ընդհանուր խմբանկար. Աերկայի եւ անցեալի վարչականներ, մասնաճիւղի հիմնադիր անդամներ, հրաւիրեալ հիւրեր, յանձնախումբերու անդամներ, սկառուտական եւ մարզական խմբապետներ ու մարզիչներ:

թեան անդամ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեանը, Հ.Յ.Դ. Աւստրալիոյ «Դրօ» կոմիտէի ներկայացուցիչ Հերոս Գրիգորեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ գորեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացու-

'Made from one single slice of natural Australian opal'

Classique

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

*Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com*



ցիհները, ինչպէս նաեւ շրջանի հիմնադիր վարչութեան անդամները՝ եղբայրներ Արսէն Հէքիմեանը, Պերճ Մոմճեանը, Յակոբ Բորթեանը, Ճորճ Աբոշեանը եւ Յովհաննէս Մարտոյեանը:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութեան մասին խօսելով, եղբ. Բանոյեան ըսաւ.

«87 տարիներ առաջ, երբ Պոլսոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ը ծնունդ առաւ, գլխաւոր նպատակն էր երիտասարդ սերունդը ներգրքաւել սկսուտական եւ մարգական աշխատանքներու մէջ, անոնց տալով հայեցի եւ ազգային դաստիարակութիւն, որպէսզի անոնք դառնան տիպար,



իմաստուն հայեր, եւ պայքարին այլասերման դեմ:

«Վստահ եմ, որ զանազան մարզերու նամբով բոլորդ ալ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին ծառայած էք եւ նոր սերունդին տուած էք Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը՝ իր գիտելիքներով»:

Իր անձին օրինակը տալով, եղբ. Բանոյեան երախտիքով արտայայտուեցաւ շրջանի աւագ սերունդին մասին: «Ահա, ես մէկն եմ այն շատերէն, որոնց շատ բան սորվեցուցիք անցնող

«Անդրանիկ» մասնաճիւղի ատենապետ եղբ. Դրօ Մոմճեան կը փոխանցէ վարչութեան խօսքը:

ՅՈՒՐԵԼԵԱՐ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԽՕՍՔԸ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԴՐՕ ՄՈՄՃԵԱՆԻ ԿՈՂՄԷ)

Յարգելի հիւրեր,
Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Այսօր, Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղի հիմնադրութեան 40րդ տարեդարձին առիթով, հաւաքուած ենք երիտասարդներ ու երեցներ, ինչպէս նաեւ հիմնադիր վարչութեան անդամներ եւ Հ.Մ.Ը.Մ.ի բարեկամներ, տօնակատարելու եւ յիշատակելու այն փայլուն նուաճումները, զորս այս մասնաճիւղը իրագործեց վերջին 40 տարիներու ընթացքին, եւ յատկապէս՝ գնահատելու ու շնորհակալութիւն յայտնելու բոլոր անոնց, որոնք քառասուն տարիներու ընթացքին մեզի թիկունք կանգնեցան իրենց նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղը միշտ կանգուն մնայ այս հիւրընկալ ափերուն եւ բարգաւաճի նոր յաջողութիւններ արձանագրելով՝ իր սկսուտական ու մարզական խումբերով եւ, աւելին, նպաստէ հայապահպանումի սրբազան աշխատանքին:

Հպարտ եմ յայտարարելու, որ «Անդրանիկ» մասնաճիւղի երիտասարդ վարչութիւնը, գիտակցելով իր պարտականութեան եւ վստահելով ձեր օժանդակութեան, պիտի կատարէ իր լաւագոյնը, որպէսզի հասակ նետող նոր սերունդը Հ.Մ.Ը.Մ.ի ձամբով ծառայէ իր ընտանիքին, հայ ժողովուրդին եւ վերջապէս իր սիրելի ազատ ու անկախ Հայաստանին:

Յատուկ շնորհակալական խօսք ունիմ Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղի երիտասարդ վարչու-

թեան անդամներուն եւ մասնաւորաբար 40ամեակի կազմակերպիչ յանձնախումբին, որոնք վարչութեան կողքին նուիրուեցան այս ձեռնարկին կազմակերպման աշխատանքին: Ընտրակալութիւն մեր մարպիչներուն, խմբապետներուն եւ Սկսուտական խորհուրդի անդամներուն: Ձեր բոլորին վարձքը կատար: Կ'ուզեմ յատուկ շնորհակալութիւն յայտնել նաեւ այն բոլոր բարերարներուն, որոնք սիրալոյսով կը կատարեն մեր մարզական խումբերուն հոգատարութիւնը եւ այն բոլոր հայորդիներուն, որոնք զանազան առիթներով մեր կազմակերպութեան ձեռնարկներուն եւ վիճակահանութիւններուն կը տրամադրեն թանկագին նուէրներ:

Վարչութեանս կողմէ կու գամ շնորհաւորելու Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղի հիմնադիր անդամները եւ ձեզմէ իւրաքանչիւրդ, որ միասնաբար եկած էք բաժնելու մեր ուրախութիւնը այս երեկոյ:

Կը փակեմ խօսքս այն հաւատքով ու համոզումով, որ բոլորս եւ դուք՝ ներկաներդ, ինչպէս նաեւ ձեր զաւակները եւ բարեկամները, համախմբուելով Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղին շուրջ, միասնաբար պիտի կարենանք նորանոր յաղթանակներ արձանագրել եւ հայու անունը միշտ բարձր պահել այս հեռաւոր ափերուն, եւ պատրաստուինք շքեղօրէն տօնակատարել մասնաճիւղիս 50ամեակը:


Ընտրակալութիւն եւ բարի պուարձութիւն:

քառասուն տարիներուն: Մենք մեծ-ցանք ձեր ազգային շունչով եւ եղանք տիպար, երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ական-ներ, մեր կարգին ստանձնելով պատասխանատուութիւններ», հաստատեց ան:

Իր խօսքին աւարտին, եղբ. Բանոյեան հրաւիրեց «Անդրանիկ» մասնաձեւ-դի երիտասարդ վարչութեան երիտասարդ ատենապետ եղբ. Դրո Մոմճեանը՝ տարու օրուան պատգամը:

Եղբ. Մոմճեան վարչութեան անու-նով ողջունեց մասնաձեւիդին բեղմնաւոր 40ամեակը, շնորհաւորեց ու գնահատեց իրերաշաջորդ վարչութիւնները, որոնք միութեան սերնդակերտ ջահը վառ պահելով՝ զայն փոխանցեցին սերունդէ սերունդ: Ասոր լաւագոյն փաստը 40ամեակի այս տօնակատարութեան մեծ թիւով երիտասարդութեան նշանակելի մասնակցութիւնն է, յայտնեց ան (եղբոր խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 30):


Խօսքերու միջեւ եւ անոնցմէ ետք,



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-թեան անդամ եղբ. Սարգիս Տէր Պետ-րոսեան:

քանի մը հանգրուանով, մեծ պատառի վրայ եւ խտասալիկի ճամբով ցուցադրու-եցան շրջանի անցնող 40 տարիներու սկառուական եւ մարզական կեանքէն պատկերներ:

Ներկաներուն տրամադրութիւնը գագաթնակէտին հասաւ, երբ Հ.Մ.-Ը.Մ.ական երգերու եղանակներու հետ, 40ամեակի խորհրդանիշով ու Շուշանա-ծաղիկով զարդարուած կարկանդակը սրահ բերուեցաւ: «Անդրանիկ» մասնա-ձեւի վարչութիւնը, օրուան հանդիսա-վարը, բոլոր երիտասարդ, բոլորուե-ցան կարկանդակին շուրջ: Անոնց միա-ցան մասնաձեւիդին հիմնադիրները, Կեդրոնական Վարչութեան ներկայա-ցուցիչը, Շրջանային Վարչութիւնը եւ հրաւիրեալ անձնաւորութիւնները, նախկին վարչականներ, սկառու խմբա-պետներ, մարզական պատասխանա-տուներ, խորհուրդի անդամներ, յու-սադրիչ ամբողջութիւն մը, Հ.Մ.Ը.Մ.ին հետ մնալու պայմանագիր մը կնքած, Աստուծոյ, ազգին ու հայրենիքին ծա-



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations **Yerevan**
32-38, Hanrabadoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am



Նիւ Սաութ Ուելզ Գահանգի խորհրդարանի անդամ քոյր Գլաուիա Պէրեճիքեան խօսքի պահուն: Կողքին, ձախէն աջ՝ Հ.Յ.Գ. «Գրօ» կոմիտէի ներկայացուցիչ Հերոս Գրիգորեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեան եւ մասնաճիւղի հիմնադիր անդամներէն եղբ. Յակոբ Քորթեան:

ուայելու նուիրական երգումով:

Տօնակատարութեան ընթացքին, կազմակերպիչ վարչութեան ուղղուած շնորհակարանքի եւ գնահատանքի խօսքեր ունեցան եղբայրներ Արսէն Հէ-

քիմեան, Սարգիս Տէր Պետրոսեան, Շրջանային Վարչութեան ատենապետ Վարուժան Ճաւահիրճեան եւ Նիու Սաութ Ուելզ նահանգի խորհրդարանի անդամ, քոյր Գլաուիա Պէրեճիքեան:

Տօնակատարութեան երկրորդ բաժինով ելոյթ ունեցաւ Փարիզէն յատկապէս հրաւիրուած երգիչ՝ եղբ. Պերճ Պէքէրեան, ընկերակցութեամբ «Կոմիտաս» նուագախումբին: Ամէն տարիքի ներկայ հասարակութիւնը խանդավառ մթնոլորտի մէջ պարեց մինչեւ առաւօտեան ժամը 1:30: Պարահանդէսին ընթացքին տեղի ունեցան մեծածիր նուիրատուութիւններ:

40ամեակի ընդհանուր կազմակերպւածութիւնը սքանչելի էր, ոգի ներշնչող երեւոյթ էր: Նորահաս մեր սերունդին խուճենքամ ներկայութիւնը խօսուուն փաստ էր, որ ունինք երիտասարդութիւն, համախմբուած Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիրներուն շուրջ: Պէտք է գուրգուրալ, պէտք է պահել այդ խանդավառութիւնը, երիտասարդութեան համար ստեղծել այնպիսի յարմարութիւններ, որոնք կարենան գոհացնել ներկայ ժամանակներու անոնց հետաքրքրութիւնները:

Այս մտահոգութիւնները պարտաւոր ենք լուծել ազգովին, որպէսզի

ԽՕՍՔ ԵՐԱՆՏԻՔԻ

Ահաւասիկ, 40ամեակը բոլորած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ «Անդրանիկ» մասնաճիւղը հպարտութեամբ ու հրճուանքով կու գայ իր երախտագիտական խօսքը յայտնելու բոլոր անդամ-անդամուհիներուն, որոնք ձեռք-ձեռքի տուած՝ հիմնեցին այս փոքրիկ ընտանիքը, Աւստրալիոյ հեռաւոր մէկ անկիւնին մէջ, ուխտելով պայքարիլ բոլոր դժուարութիւններու դէմ:

Այս ընտանիքը բազմացաւ, ուռճացաւ ու տարածուեցաւ՝ խօսելով հայերէն, քարոզելով հայոց պատմութիւն ու պաշտպանելով հայոց դատը:

«Անդրանիկ» մասնաճիւղը, Հ.Մ.Ը.Մ.ի այլ մասնաճիւղերուն նման, կը բաղկանայ սկաուտական ու մարզական խումբերէ, որոնք թէեւ քիչ են թիւով, սակայն եղած են միշտ օրինակելի անդամները մեր ազգին ու միութեան: Իսկապէս մեծ պոհողութեամբ է որ մեր մասնաճիւղը կը կանգնի ու կը տոկայ 40 տարիէ ի վեր, ի պատիւ այն բոլոր քոյրերուն ու եղբայրներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.ական ու հայկական ոգին բարձր պահելով իրենց մէջ, նուիրուած են այս միութեան բարգաւաճման աշխատանքին:

Յարգա՛նք ձեզ, մարզիկներ եւ սկաուտներ, ձեզմով միութիւնը միշտ կանգուն պիտի մնայ: Ծնորհակալական խօսքեր բոլոր տքնաջան աշխատողներուն, բոլոր բարերարներուն, որոնք սիւներն են մեր միութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղի վարչութիւնը մեծ հրճուանքով կ'ողջունէ իր 40ամեակը եւ կը շնորհաւորէ բոլոր անդամներն ու անդամուհիները, գնահատելով անոնց տարած աշխատանքները ու մաղթելով բոլորին ուժ եւ կարողութիւն, որպէսզի կարենան միշտ բարձրանալ ու բարձրացնել անմահ Հ.Մ.Ը.Մ.ը:

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ...

Շարունակումս՝ 21րդ էջին



Հ.Մ.Ը.Մ.ը յաղթանակէ-յաղթանակ աւելի ազդու, աւելի բարձր մակարդակով՝ նիւթապէս զօրաւոր, շարունակէ իր վսեմ առաքելութիւնը՝ «Բարձրացիր-բարձրացուր»ի մարդակերտ նշանաբանին թելադրանքով:

Թող միշտ դալար մնայ հայ երկսեռ երիտասարդութիւնը՝ հայրենիքին համար, հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն ձեռքբերման համար:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի պարագային, Հ.Մ.Ը.Մ.ի եղբայրական ոգիին տիրապետութիւնը ամէն բանէ վեր է: Ան ոչ միայն խնդրայարոյց, անկիրթ ու անքաղաքավար է, այլեւ ընդհակառակը՝ կիրթ է, իր մարզական պատասխանատուին կամ մարզիչին հանդէպ յարգալից է, հնազանդ եւ կարգապահ: Ան իր մրցակիցին մէջ չի տեսներ թշնամի, այլ՝ մարզական ոգիով մարզիկ: Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը ինք բարձրացած կ'ըլլայ յաչս մրցակից մարզիկին, յաչս մարզասէրներուն, երբ իր տուած ակամայ հարուածէն ետք, իր մրցակից մարզիկին ձեռքէն բռնելով զայն դետնէն կը բարձրացնէ:

Այս իսկ պատճառով կազմակերպիչ մարմիններ, օրուան յաղթանակի բաժակին տիրացած խումբին կամ մարզիկին զուգահեռ, նաեւ «Ֆէր վիլէյ»ի բաժակ կը տրամադրեն մաքուր եւ մարզական բարձր ոգի ցուցաբերող խումբին կամ մարզիկին:

TOGETHER WE ARE STRONGER
ՄԻԱՍԻՆ ԱԻԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ

ԱՖՀԻԼ AFHIL
Armenian Mutual Fund
Tel. / Fax: 01 242556 - 242557



ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՐՊԻ ՎԵՐՁԻՆ ՀՐԱԺԵՇՏԸ

Սեւան Նապարեան ՓԱՐԻԶ

Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը 14 Մարտ 2006ին կորսնցուց իր բազմավաստակ եղբայրներէն՝ տոքթ. Յարութիւն Գազանճեանը, Յ. Գեղարդ գրչանունով ծանօթ:

Տոքթ. Յարութիւն Գազանճեան իր մանկութենէն սկսեալ գտնուած է Հ.Մ.Ը.Մ-ի միջավայրին մէջ, երբ տակաւին կը յաճախէր Պէյրութի Ս. Նշան Ազգային Վարժարանը, ապա՝ Համազգայինի Հայ Ճեմարանը:

Սկառուտական շարքերէն սկսեալ ան բարձրացած է միութեան նուիրապետական կարգերը, հասնելու համար բարձրագոյնին՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամակցութեան:

Եղբոր վերջին յարգանքը մատուցելու պարտականութիւնը ստանձնած էր Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը: Արդ, Երեքշաբթի, 21 Մարտի յետմիջօրէին, Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ Տաճարին մէջ տեղի ունեցաւ հանգուցեալ եղբոր յուղարկաւորութիւնը:

Եկեղեցւոյ մէջ ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ականներ, տարագաւոր սկառուներ, Համազգայինի անդամներ եւ սգակիրներ: Կղերական դասը կը գլխաւորէր Փարիզի Առաջնորդ Գիւտ Արք. Նաքթաշեան:

Եկեղեցւոյ մէջ, յաւուր պատշաճի դամբանականներ կարդացին Համազգայինի Կեդրոնական Վարչութեան կողմէ Նոնիկ Յովհաննէսեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ, Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ՝ եղբ. Լեւոն Պաղտասարեան: Եղբայր Լ. Պաղտասարեան անդրադարձաւ «Լուսամիտ գաղափարախօս, անշեղ միութենական, գիրի ու խօսքի վարպետ» եղբ. Յ. Գեղարդի արժանիքներուն, աւելցնելով, որ ան «յանախ գործ ու տուն ձգած՝ ծառայեց Հ.Մ.Ը.Մ.ին, ծանօթացնելու համար իր սիրելի միութիւնը հայ թէ օտար միջավայրերուն: Երբ իրեն վստահուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ը ներկայացնել Համաշխարհային Սկառուտական Շարժումին մօտ, եղբ. Գեղարդ բազմիցս թակեց ժընեւի միջազգային գրասենեակին դուռը եւ յաջողեցաւ Հ.Մ.Ը.Մ.ը ընդունիլ տալ իրեն սկառուիզմն ու մարմնակրթանքը նոյն յարկին տակ կիրարկող կազմակերպութիւն, ճամբայ բանալով միջազգային ընտանիքէն ներս Հայաստանի սկառուտական շարժումին ընդունման»:

Եղբայր Պաղտասարեան մատնանշեց, թէ կորուսեալը ոսկեայ գրիչի տէր անձնաւորութիւն, առաջին խմբագիրներէն մէկը Հ.Մ.Ը.Մ-ի «Մարգիկ» պաշտօնաթերթին ու նաեւ երկար տարիներու աշխատակիցը անոր, այսօր կը բաժնուի մեզմէ, իր ետին ձգելով բաց մը, միաժամանակ փոխանցելով ջահ մը, որ այսուհետեւ երիտասարդ սերունդին պիտի վստահուի (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 17-18):

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ-ի դրօշով ծածկուած եղբոր դազաղը առաջնորդուեցաւ Ռիւէօյ Մայմեզոնի գերեզմանատունը, ուր կատարուեցաւ թաղման կարգը: Երեկոյեան, եղբոր հոգիին համար արուեստը հոգեճաշ:

Հանգուցեալ եղբայրը արժանացած էր միութեան «Արժանաց» շքանշանին, ինչպէս նաեւ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ պարգևատրուած էր «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշանով:

Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը կը խոնարհի եղբոր յիշատակին առջեւ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՖԼՈՐԻՏԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ 25ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Ֆլորիտա ԹՂԹԱԿԻՅ

ՀՄԸՄԻ Ֆլորիտայի մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, 4 Մարտ 2006ին, Փամփենոյի «Մարտիկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ մասնաճիւղին տարեկան պարահանդէսը՝ նուիրուած մասնաճիւղին հիմնադրութեան 25ամեակին:

Սրահը լեցուած էր ՀՄԸՄԻ բարեկամներով, համակիրներով եւ անշուշտ՝ միութենականներով, աւելի քան 300 հոգի:

Օրուան բարի գալուստի խօսքը փոխանցեց մասնաճիւղի ատենապետ եղբ. Պետրոս Պետրոսեան: Ան բարձր գնահատեց ՀՄԸՄԻ աւանդը հայապահպանման գործին մէջ եւ ներկայացուց մասնաճիւղի վարչութեան ծրագրած աշխատանքները, որոնց իրականացման համար ՀՄԸՄԻ միշտ կարիքը ունի իր համակիրներուն անկողնէն: Եղբ. Պետրոսեան շնորհակալութիւն յայտնեց նախորդ վարչութիւններուն, անդամներուն եւ համակիրներուն, որոնք 25 տարինը շարունակ զօրավիպ

կանգնած են ՀՄԸՄԻ աշխատանքներուն:

Ապա, խանդավառութիւնը իր գագաթնակէտին հասաւ, երբ յայտարարուեցաւ, որ բարերար եղբ. Ճորճ Բակումեանի օժանդակութեամբ, նոր համալիրէն ներս ՀՄԸՄԻ պիտի օժտուի իր սեփական մարզադաշտով:



Յաջորդեց կարկանդակի հատումը՝ ՀՄԸՄԻ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեանի, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վազգէն Լախոյեանի եւ համալիրի շինութեան բարերար Ճորճ Բակումեանի կողմէ:

Երեկոն խանդավառեց երգիչ Յարութ Փամպուքեան իր նուագախումբով:

Նուագի եւ պարի միջնորդարին մէջ, ազգային ու յեղափոխական երգերէ գինովցած՝ ներկաները երեկոն լուսցուցին միասնաբար:



Philippe Photo Trade

Philippe Photo Trade

- Audio / Video Production / Post Production Systems
- Liner / Non-Liner Editing Systems
- Data / Video Large Screen Projection Systems
- Audio / Video Systems for Professional Application
- Conferencing / Simultaneous Translation Systems
- Language Labs & Conventional Training Aids Systems

EXPERTS IN AUDIO-VISUAL SYSTEMS INTEGRATION AND TOTAL CONTROL APPLICATION

Head Office: 1(a) Mesaha St., Orman Sq., Dokki, Zip Code: 12311 A.R. Egypt.
Tel: 7491350 (8Lines) Fax: 7481069 E-mail: philippe@ritsec2.com.eg

Alex. Branch: 33 Sidi El-Metwally St., El-Attarin / Alexandria
Tel: (03)4916017 Fax: (03)4923051 E-mail: philippe@ritsec2.com.eg

Philippe Photo Trade

Assadourian Bros.



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՅՅՐԴ ԺՈՂՈՎԸ

Տիրան Շահինեան ՄՈՆԹՐԷԱԼ

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի Շրջանային Ներկայացուցչական ՅՅրդ Ժողովը տեղի ունեցավ 19-20 Մարտ 2006ին, Մոնթրեալի Հայ Կեդրոնի Հ.Մ.Ը.Մ.- «Կամբ» մարզասրահին մէջ, ներկայութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան, Մոնթրեալի, Թորոնթոյի եւ Քէմպրիճի մասնաճիւղերու ներկայացուցիչներու: Ժողովին խորհրդակցական ձայնով մասնակցեցան քոյր միութիւններու ներկայացուցիչներ եւ հրաւիրեալներ, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ՝ եղբ. Մանուէլ Հայլաճեան, եղբ. Գրիգոր Գուլումճեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վազգէն Լախոյեան եւ Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ եղբ. Խորէն Հիմիտեան:

Ժողովին բացումը կատարեց ընթացակարգ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սեդրակ Պուրսայեան: Եղբայրը ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգելու յիշատակը վերջերս մահացած վաստակաւոր երկու Հ.Մ.Ը.Մ.ականներու՝ Կարօ Թիւթիւնճեանի եւ Յարութիւն Գեղարդի:

Եղբայրը Շրջանային Վարչութեան անունով բարի գալուստի խօսք ուղղեց բոլորին, յոյս յայտնելով, որ ժողովին տրուած որոշումները եւ ապագայ ծրագիրներու մշակումը մեծապէս կը ծա-



նայեն Հ.Մ.Ը.Մ.ի վերելքին: Այնուհետեւ, օրակարգի քննարկման կէտերուն անցնելով, ժողովը ընտրեց իր դիւանդեղբայրներ Մոսիկ Թոփուզեան եւ Անդօ Խաչատուրեան՝ ատենապետներ, քոյրերը Հուրիկ Հայրապետեան եւ Կարինէ Քէօսէեան՝ ատենադպիրներ:

Յաջորդաբար ընտրուեցան բանաձեւի, հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու անդամները, որոնք ժողովի համապատասխան օրակարգին ներկայացուցին իրենց զեկուցումները:

Ապա, ժողովը լսեց մասնաճիւղերու գործունէութեան ամփոփ տեղեկագիրները, որոնցմէ պարզուեցաւ, թէ մարզական, սկաութական եւ ընկերային ընթացիկ գործունէութեան առընթեր, մասնաճիւղերը իրենց մասնակցութիւնը բերած են նաեւ հանրանուէր ձեռնարկներու եւ ազգային տօնակատարութիւններու:

Մարտ 2006ի տուեալներով, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի մասնաճիւղերը միասնաբար ունին 1669 անդամներ.՝ 884 երկսեռ մարդիկներ եւ 555 հոգիէ բաղկացած սկաութական կազմ: Շրջա-

նը ունի Ֆուլթոնի, վոլիպոլի, պասթիպոլի, ֆլոր հոքիի, աթլետիկայի, փինկփինկի, ճատրակի, մարտարուեստի եւ լողի երկսեռ խումբեր:

Ներկայացուցչական ժողովը լսելէ ետք Շրջանային Վարչութեան միամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրները, անոնց շուրջ հարցումներն ու պատասխանները, ապա՝ կատարելէ ետք գործունէութեան ըստ էութեան քննարկումը, Շրջանային Վարչութեան 2005-2006 տարեշրջանի գործունէութիւնը նկատեց «զնահատելի»:

Ժողովին մնացեալ օրակարգով ներկաները քննարկեցին հետեւեալ նիւթերը.՝

- Սկաութական
 - Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում
 - Խմբապետական ժողով - սեմինար
 - Սկաութական գիրքեր

- Մարզական
 - Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 7րդ մարզախաղերու մասնակցութեան արժեւորում

- Արեւելեան եւ Արեւմտեան շրջաններու միջ-մասնաճիւղային խաղերու մասնակցութիւն
- Գանատայի շրջանի մարզախաղեր

●Կազմակերպչական
- Մասնաճիւղերու իրավիճակ
- Մարզական սեմինար եւ դաստիարակչական յայտագիր
Շաբաթ երեկոյեան ժամը 8.30ին, ժողովը վերջ տուաւ իր աշխատանքներուն, վերսկսելու համար Կիրակի առաւօտեան ժամը 9ին:



ջեւ համագործակցութեան ոգիին ամրապնդման կարեւորութիւնը: ՀՕՄԻ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Աննա Պուլկարեան բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի ազգօգուտ աշխատանքը եւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց Մոնթրէլայի վարչութեան կատարած հիւրասիրութեան՝ ՀՕՄԻ Պատգամաւորական եւ համագործակցային ժողովներուն ընթացքին: Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Հիմիտեան իր կարգին շնորհակարարեց նորընտիր Շրջանային Վարչութիւնն ու ժողովականները:

Երեք նիստերու ընթացքին ժողովականները օրակարգի բոլոր հարցերուն անդրադառնալէ ետք, իրենց շինիչ առաջարկներն ու բանաձեւերը ներկայացուցին նոր տարեշրջանի գործունէութեան համար:

Հուսկ, ժողովը ընտրեց Շրջանային Վարչութեան կազմի լրացուցիչ երկու անդամներ, յանձինս՝ եղբայրներ Լեւոն Նաճարեանի եւ Արմէն Կէտիկեանի:

Աւարտին, Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ եղբայր Վազգէն Լախոյեան ժողովին փոխանցեց իր սրտի խօսքը, շեշտելով երկու շրջաններու մի-

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբայր Հրաչ Տէր Սարգիսեան իր փակման խօսքով շնորհակարարութեան եւ յաջողութեան մաղթանքներ փոխանցեց եւ թելադրեց աշխատիլ միասնաբար, յատկապէս մեծ ուշադրութիւն դարձնելով գաղութէն ներս երիտասարդութեան ներգրաւման աշխատանքներուն:

Ջերմ մթնոլորտի մէջ, ժողովը վերջ գտաւ ժողովականներու կողմէ «Յառաջ նահատակ» քայլերգին խմբերգումով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄՈՆԹՐԷԱԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Տ.Շ. ՄՈՆԹՐԷԱԼ

Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի 33րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովի նախօրեակին, Մոնթրէլայի Հ.Մ.Ը.Մ.- «Կամք» մասնաճիւղը 3 նիստով գումարեց անդամական իր ընդհանուր ժողովը:

Առաջին նիստին անդամները լսեցին ընթացաւարտ վարչութեան եւ գոյգ խորհուրդներու, սկստակական եւ մարզական, 2005-2006 տարեշրջանի գործունէութեան նիւթաբարոյակական տեղեկագիրը, որմէ ետք կատարեցին լուսաբանական հարցումներ:

Երկրորդ նիստին տեղի ունեցաւ վարչութեան գործունէութեան ըստ էութեան քննարկումը: Ժողովը ընթացաւարտ վարչութեան գործունէութիւնը նկատեց «գնահատելի»:

Ապա, ընտրուեցան 33րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովին մասնաճիւղին 9 ներկայացուցիչները:

Երրորդ նիստը գումարուեցաւ Շրջանային Ներկայացուցչական ժողովի գումարումէն ետք:

Այս նիստին ժողովականները լսեցին ընդհանուր գեկոյց մը Ներկայացուցչական ժողովի որոշումներուն մասին եւ ապա ընտրեցին 2006-2007 տարեշրջանի վարչութիւնը, որ իր գիււանի կազմութեանէն ետք պարզեց հետեւեալ պատկերը: - եղբայրներ Տիրան Շահինեան ատենապետ, քոյր Սօսի Հայրապետեան ատենադպիր, Գրիգոր Ապրազեան գանձապահ, Ռիչըրտ Մէլքոնեան, Վիգէն Պասմաճեան, Ճինէա Պէյլեան եւ Ճորճ Պալէոգեան խորհրդակականներ:

Մասնաճիւղին վարչութիւնը առաջին աւիթով նշանակեց մասնաճիւղի սկստակական եւ մարզական խորհուրդները եւ նոր եռանդով սկսաւ իր գործունէութեան:



ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԵԿՈՒՄԻ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցնող ամիսներուն, Ներկայացուցչական իրենց ժողովները գումարեցին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի, Արեւելեան Մ. Նահանգներու, Գանատայի, Լոնտոնի, Ֆրանսայի, Ադեքսանդրիոյ, Երուսաղէմի, Ալմերոյի եւ Աւստրալիոյ շրջանները, որոնք ընթացիկ հաշուետուութենէ ետք՝ ընտրեցին իրենց պատասխանատու նոր մարմինները, աշխատանքներու հետեւեալ բաժանումով.-

ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ատենապետ- եղբ. Յակոբ Քէշիշեան
Փոխ-ատենապետ- եղբ. Բաֆֆի Մունջօղլեան
Ատենադպիր- եղբ. Համբիկ Միսաքեան
Գանձապահ- եղբ. Հրայր Սաղրեան

Խորհրդականներ- քոյր Լուսին Գազէզեան, եղբայրներ Միշէլ Խորոզեան, Վրէժ Թագեան, Բաֆֆի Թորիկեան եւ Մինաս Գարամինասեան:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ատենապետ- եղբ. Յակոբ Իշխանեան
Փոխ-ատենապետ- եղբ. Հրաչ Մեսրոպեան
Ատենադպիր- եղբ. Վահէ Թանաշեան
Գանձապահ- եղբ. Ռուպերթ Քալանթարի
Մարզականի ներկայացուցիչ- եղբ. Վազգէն Լախոյեան
Սկստականի ներկայացուցիչ- եղբ. Սարգիս Դարբինեան
Յարաբերականի եւ քարոզչականի ներկայացուցիչ- եղբ. Վարուժան Ճինտոյեան

ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ատենապետ- եղբ. Սեդրակ Պուրսայեան
Ատենադպիր- եղբ. Լեւոն Նաճարեան
Գանձապահ- եղբ. Բարգէն Կարապետեան
Խորհրդականներ- եղբայրներ Արմէն Կէտիկեան եւ Վահան Զալիբեան

ԼՈՆՏՈՆԻ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ատենապետ- եղբ. Ֆրէտ Հայրապետեան
Ատենադպիր- քոյր Ալիսոյ Օհանեան
Հաշուապահ- քոյր Արմինէ Գասպարեան
Գանձապահ եւ սկստականի ներկայացուցիչ- քոյր Մարինա Աւագեան
Մարզականի ներկայացուցիչ- եղբ. Սեւան Արթին
Տնտեսականի ներկայացուցիչ- քոյր Ռուբինա Ազիզեան

Խորհրդական- եղբ. Վահան Գրիգորեան

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ատենապետ- եղբ. Հրաչ Սիսեռեան
Փոխ-ատենապետ- եղբ. Վարանդ Պաղտասարեան
Ատենադպիր- քոյր Ռիթա Իսահակեան
Գանձապահ- եղբ. Հարմիկ Օհանեան
Հաշուապահ- եղբ. Նազո Նաճարեան

ԱՂԵՔՍԱՆԳԻՐՈՅ Հ.Մ.Ը.Մ. - «ԿԱՄՔ»Ի ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ատենապետ- եղբ. տղթ. Գարլո Կարապետեան
Փոխ-ատենապետ- եղբ. Պերճ Միսքեան
Ատենադպիր- քոյր Մարիա Հալլաճեան
Գանձապահ- եղբ. Հրայր Մարտիկեան
Խորհրդականներ- եղբայրներ Կարի Պօճէլեան, Միհրան Գալաճեան, Էտի Պահարեան, Վահէ Պէնօհանեան, քոյրեր Ալին Ազնաւուրեան եւ Նորա Լէյլէկեան

ԵՐՈՒՍԱԿԵՍԻ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ատենապետ- եղբ. Սերոբ Սահակեան
Փոխ-ատենապետ- եղբ. Յակոբ Տըլտըլեան
Ատենադպիր- եղբ. Յարութ Պաղամեան
Գանձապահ- քոյր Ազնիւ Հինտոյեան
Սկստականի ներկայացուցիչ- եղբ. Բաֆֆի Եզէկիլեան
Մարզականի ներկայացուցիչ- եղբ. Ռուբէն Նալպանտեան
Ընկերայինի ներկայացուցիչ- եղբ. Կարո Պաղպուտեան

ԱԼՄԵԼՈՅԻ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ատենապետ- եղբ. Յարութ Պօղոսեան
Փոխ-ատենապետ- եղբ. Հրայր Յակոբեան
Ատենադպիր- քոյր Յասմիկ Օհանեան
Փոխ-ատենադպիր- եղբ. Ասլան Ասլանեան
Գանձապահ- եղբ. Բաֆֆի Ամիրխանեան
Հաշուապահ- քոյր Նայիրի Սեւտալեան
Խորհրդական- եղբ. Սարգիս Տէր Զազարեան

ԱՄՍՐԱԼԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ատենապետ- եղբ. Յարութ Քէօշկէրեան
Փոխ-ատենապետ- եղբ. Վիզէն Քորթեան
Ատենադպիր- քոյր Անի Բանտոյեան
Գանձապահ- եղբ. Արա Պոյաճեան
Խորհրդական- եղբ. Յովիկ Կիրակոսեան

ԵՂԲ. ԱԼԷՔՍ ՉԱՐՄԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Չափն Բրուտեան ՄիՏՆԻ

Մ.Ը.Մ. ժարգական աւագ սերունդի ներկայացուցիչներէն դէմք մըն ալ անյայտացաւ: 76 տարեկան հասակին, Աւստրալիոյ Փըրթ քաղաքին մէջ իր մահկանացուն կնքեց Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի երբեմնի փայլուն դէմքերէն՝ եղբ. Ալէքս Չարմարեանը:

Եղբ. Ալէքս ծնած էր Աղեքսանդրիա, 24 Մայիս 1929ին: Ան երկար տարիներ մաս կազմած է տեղւոյն «Կամք» Մարմնամարզական Ակումբին եւ Հայ Արիներու Միութեան (հետագային երկուքը միաձուլուած Հ.Մ.Ը.Մ.- «Կամք» անուով): Եղած է անուանի աթլետ: Եգիպտահայ աթլետիզմի խաղերուն ան տիրացած է սկաւառակի արձակման առաջնութեան եւ հաստատած է մրցանիչ:

Եգիպտական բանակին մէջ իր ծառայութեան տարիներուն եւս, եղբ. Ալէքս արձանագրած է պատուաբեր արդիւնքներ եւ արժանացած է յիսնապետի աստիճանին:

Եգիպտոսի աթլետիզմի մրցումներուն ան գրաւած է երրորդ դիրքը: Իր անունը յիշուած է «Յուշամատեան Հ.Մ.Ը.Մ.ի 1918-1958» գիրքին մէջ (էջ 154): Չայն կը յիշէ նաեւ եղբ. Բիւզանդ Թորիկեան՝ իր «Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան» գործին Բ. հատորին մէջ (էջ 264):

1964ին եղբ. Ալէքս հաստատուած է Աւստրալիոյ Փըրթ քաղաքը, ուր զբաղած է ժամագործութեամբ եւ արեւելեան երաժշտութեամբ: Միաժամանակ, ան կազմած է ընտանեկան բոյնը:

Հողը թեթեւ դայ վրադ, եղբայր Ալէքս:
Յիշատակդ վառ պիտի մնայ բոլորին սրտերուն մէջ:



**Sarkis
or
Paul**

SASSOUNIAN INC.

Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220
(213) 627-1206
Outside Ca: 1-800-544-4419
Fax: (213) 623-6981

www.sassouniantools.com

E-mail: info@sassouniantools.com

Տ ա ր ք ե ր չ ա յ ե ա ց ք ո Վ



Էլի Հուլիշեան

With the compliments of

Restaurant Al-Mayass

«ՄԱՐԶԻԿ»Ի 25ԱՄԵԱԿԻ ՖՈՆՏԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եզրիպտոսէն՝
 - Վարուժան Գազանճեան \$ 1000
- Անգլիայէն՝
 - Սելլա Թնճուկեան \$ 1000
- Յորդանանէն՝
 - Ճորճ Տաքէսեան \$ 500
- Հոլանտայէն՝
 - Հ.Մ.Ը.Մ.Ի Ալմեյդայի վարչութիւն 500 Եւրօ
- Լիբանանէն՝
 - Պուրճ Համուտի քաղաքապետութիւն \$ 1000
 - Ժիրայր եւ Հրայր Խաչատուրեաններ \$ 500
 - Լուիսֆիլի Սարգիսեան \$ 500
 - Արթիւր Նազարեան \$ 300
 - Պետիկ Սապունճեան \$ 300
 - Կարօ Սալիսեան \$ 300
 - Յակոբ Լոշիսաճեան \$ 300
 - Յարութիւն Շահպազեան \$ 300
 - Միշէլ Զէյթունլեան \$ 300
 - Վարդան Պայթարեան \$ 300
 - Ջաւէն Պոյաճեան \$ 300
 - Վրէժ Սապունճեան \$ 250
 - Ա.Ֆ.Հ.ԻԼ \$ 200
 - Աւօ Սիւլահեան \$ 200
 - Կարօ Պոյաճեան \$ 200
 - Յակոբ Զիլինկիրեան \$ 200
 - Յակոբ Թերզեան \$ 200
 - Ժազ Զուխատարեան \$ 200
 - Մելքոն Յակոբեան \$ 200
 - Նշան Համամճեան \$ 200
 - Սեդրակ Դանիէլեան \$ 200
 - Վարուժ Սարգիսեան \$ 200
 - Բիւզանդ Թորիկեան \$ 150
 - Հ.Մ.Ը.Մ.Ի Անթիլիասի մասնաճիւղի վարչութիւն \$ 100
 - Մի ոմն \$ 100
 - Արա Յակոբեան \$ 100
 - Արա Տէր Պետրոսեան \$ 100
 - Տոքթ. Պետրոս Գարաճրճեան \$ 100
 - Կարօ Աբրահամեան \$ 100
 - Կարօ Յարութիւնեան \$ 100
 - Ճորճ Տէմիրճեան \$ 100
 - Կիրակոս Նէնէճեան \$ 100
 - Յակոբ Համամճեան \$ 100

- Համբիկ Գնտոյեան \$ 100
- Յարութ Գրիօղլեան \$ 100
- Յարութիւն Սամուէլեան \$ 100
- Յովիկ Պիլէմճեան \$ 100
- Ժան Ներսէսեան \$ 100
- Ճոնի Արեւեան \$ 100
- Գրիգոր Գրիգորեան \$ 100
- Մարտիկ Կէրէքմէզեան \$ 100
- ՄԵՆԶԱ \$ 100
- Միհրան Շիմշիրեան \$ 100
- Մուրատ Գափլանեան \$ 100
- Բենիամին Պչաքճեան \$ 100
- Փիէր Գուլաճեան \$ 100
- Սաբօ Արմէնեան \$ 100
- Սէմ Բազուկեան \$ 100
- Սարգիս Աճէմեան \$ 100
- Սարգիս Գոլանճեան \$ 100
- Սեպուհ Թոփալեան \$ 100
- Վազգէն Զէքիճեան \$ 100
- Վիգէն Աղասարգիսեան \$ 100
- Ջոհրապ Մարգարեան \$ 100
- Բաֆֆի Կէօվօղլանեան \$ 100
- Ջարուհի Տէր Յարութիւնեան \$ 100
- Ժազ Մանտալեան \$ 50
- Մարաշի Հայրենակցական Միութիւն 500.000 Լ. ռ.
- Ժազ Քէրթէճեան 500.000 Լ. ռ.
- Հայկական Հաստատութիւն մը 300.000 Լ. ռ.
- Բաֆֆի Միալեան 250.000 Լ. ռ.
- Լեւոն Տէր Սարգիսեան 100.000 Լ. ռ.

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ (ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ)

- Կարպիս Էօլմէսէքեանի մահուան առիթով՝
 - Ժիրայր Սարգիսեան \$ 200
 - Մհեր Դաւիթեան \$ 200
 - Յարութ Մանուկեան \$ 100
 - «Միտոն Թրէվըլ» \$ 100
- Յարութ Մարտիրոսեան \$ 100
- Կարօ Թիւթիւնճեանի մահուան առիթով՝
 - Մանուէլ Մարսիլեան \$ 200
 - Կարօ Գազանճեան \$ 100
 - Վիգէն Աբէլեան \$ 100

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, երկու տարիէ ի վեր հաստատուած է «Մարպիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրուութիւնը: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:

«Մարպիկ»ի «Քաջալեր անդամներ են»-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուհի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Չարեհ Գարակիւլէեան, Յակոբ Թոքաթեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Կարապետ Ն. Թոփճեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ Ճորճ Տաքէսեան:


ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. «Ֆորմուլա 1»ի 2005ի աշխարհի ախոյեանը:
2. Այբուբեն - Ապշիլ - Գեղեցիկ արքայ:
3. Միև կեանքին վերաբերող - Չայնակից տառեր:
4. Մեզի խնամի ցեղ մը - Ֆուլթոյի միջազգային ֆետերասիոնը:
5. Արաբական անապատ:
6. Հեզնանք - Կանգոն երկնաքար:
7. Հայաստանի մայրաքաղաքներէն - Խիւս - Յարաբերական դերանուն:
8. Լայքա, ռեսնային հիւթ - Վախկոտ:
9. Կինը տապարի կը վերածէ - Պելճիքացի բեմիս-վումբն:
10. Ճափոնական օդանավային ընկերութիւն մը - Կաթնտու:
11. Նուաստ - 65 - Իրերայաջորդ գիրեր:
12. Տափակ դմաճ - Լծկան կենդանի - Իգական օտար անուն:
13. Մուրատեան քոյրերէն - Թնդանօթ:
14. Ողիմպիական քաղաք (1998 թ.) - Պաղի:
15. Ա. Մ. Նահանգներէն - Աղբիւր:
16. Խօսք - Գաղտնագողի մտնել կամ ելլել:
17. Միսէ խճուղ - Գոյականի հոլովներէն:
18. Դաւ - Հայոց Ը. ամիսը - էրի եւ Սելմի եղբայրը:
19. Հաստատական պատասխան - Արական անուն - Որսի միս:
20. Լոյժ սեւ ձիւթ - Քնանալ - Իգական «նա»:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Պարսելոնայի հոլանտացի մարզիչը - Միջազգային ընտանիք:
2. Ասիական դրամանիչ - Անըջանք - Թուշ:
3. Տառի մը անունը - Եմէնի քաղաքներէն - Արդի:
4. Յիշատակել - Սարսափահար, լեղապատառ:
5. Աւետիք Իսահակեանի երկերէն (երկու բառ) - Քուղ - Անձնական դերանուն:
6. Հանգոյն - Թեւի տակ - Պետական խորհրդանիշ:
7. Մորթէ չինուած պարկ - Յուցակ - Առնչութիւն - Ասիական երկիր:
8. Արական օտար անուն - Բամպակին կորիզը հանել - Շագանակի ծառ:
9. Ֆրանսական քաղաք - Իգական անուն - Մթնոլորտային գոլորչի - Տառ:
10. Չայնանիչ - Եւրոպական ինքնաշարժներու մակնիչ - Տապալի - Վախ:
11. Ներկատու որդ - Եհովա անունան կրճատուած ձեւը - Դրաստամատ Կանայեան:
12. Մանգաղի կոթ - Արցախի Առանշահիկ տոհմի իշխաններէն:
13. Անձնական դերանուն - Թռչուն որսալու թակարդ - Սանձ, դանդախալանդ:
14. Դարձեալ - Զօրաբաբի որդին - Բագրատ Այվազեանցի երկերէն՝ «... Մախուեցաւ»:
15. Ամերիկա ծնած Ֆրանսացի վիպագիր՝ Ժիլլիէն - Պապական նուիրապետութեան կեդրոնը - Այբուբենէն:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ԹԻՒ 153 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

